«Հաստատում եմ»

Տնօրեն _____Է. Գ. Գասպարյան

«___»_____ 2020թ.

Կ.Տ.

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ

(Ուսումնական հաստատության անվանումը)

ՀՀ Արարատի մարզ, ք.Արարատ, Խանջյան փող., 67 շենք

(Հաստատության հասցեն)

2020

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	Պաշտոնը հաստատությունում	Պատասխանատվությունը խմբում
Էլլա Գասպարյան	Քոլեջի տնօրեն	Աշխատանքային խմբի ղեկավար
Կարինե Սարգսյան	Որակի ապահովման պատասխանատու	Որակի աշխատանքների համակարգող, աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ
Սուսան Հայկյան	Տնօրենի տեղակալ՝ ուսումնական աշխատանքների գծով	Աշխատանքային խմբի անդամ
Ազատ Հակոբյան	Տնօրենի տեղակալ՝ կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով	Աշխատանքային խմբի անդամ
Տիգրան Եղիազարյան	Տնօրենի տեղակալ՝ վարչատնտեսական աշխատանքների գծով	Աշխատանքային խմբի անդամ
Ռուզան Վարդազարյան	Դասախոս	Աշխատանքային խմբի անդամ
Սուսան Աբրահամյան	Դասախոս	Աշխատանքային խմբի անդամ
Մարինե Խաչատրյան	Դասախոս	Աշխատանքային խմբի անդամ
Նելլի Բաղդասարյան	Դասախոս	Աշխատանքային խմբի անդամ
Ռուբեն Այվազյան	Դասախոս	Աշխատանքային խմբի անդամ
Նվարդ Հարությունյան	Դասախոս	Աշխատանքային խմբի անդամ
Մերինե Տերտերյան	Դասախոս	Աշխատանքային խմբի անդամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... **Error! Bookmark not defined.**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 5

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 9

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 9

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 15

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 22

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 38

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 46

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 52

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 57

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 64

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 68

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 72

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 79

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական, հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային մակարդակում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության,
- ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ՄՈՒՀ – մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱՇ – որակավորումների ազգային շրջանակ

ՈԱ – որակի ապահովում

ՄԿԾ – մասնագիտական կրթական ծրագիր

ՊԿՉ – պետական կրթական չափորոշիչ

ՈՒԱ – ուսումնառության արդյունք

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1-2 էջի սահմաններում անհրաժեշտ է անդրադառնալ հաստատության գործունեության նշանակալից փուլերին՝ կապված նրա կազմակերպաիրավական ձևի, կարգավիճակի (այդ թվում՝հավատարմագրվածի), առաքելության կամ հիմնական նպատակների փոփոխության հետ, ինչպես նաև ուսումնական հաստատության կարծիքով հիշատակման արժանի ձեռքբերումների և իրադարձությունների մասին:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձ հանդիսացող, միջին մասնագիտական հաստատություն է: Քոլեջը հանդիսանում է Արարատի ինդուստրիալ – տեխնոլոգիական տեխնիկումի /գրանցման №13.0004.20.11.1996 թ./ իրավահաջորդը:

ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 4-ի № 601 որոշմամբ 2002թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ պետական ռեգիստրի կողմից ձեռք է բերել իրավաբանական անձի պետական գրանցման վկայական (վկայական՝ 03 Ա 057860): 2014թ. օգոստոսի 19-ից իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, տնօրեն՝ Էլլա Գագիկի Գասպարյան (ներդիր 004):

ԱՊՔ-ն իր գործունեության վերջին 5 տարիների ընթացքում տվել է ավելի քան 900 շրջանավարտ, ովքեր, աշխատելով մեր երկրի տնտեսության տարբեր ոլորտներում, որպես ղեկավար կամ միջին օղակի մասնագետներ, նպաստել են տարբեր կազմակերպությունների գործունեության առաջխաղացմանը: Նրանցից շատերը դարձել են մրցունակ մասնագետներ: Այսօր էլ քոլեջը շարունակում է իր գործունեությունը՝ որակյալ կադրեր պատրաստելով, ինչպես տարածաշրջանի, այնպես էլ այլ մարզերի տարբեր ոլորտների համար, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգերում հետևյալ մասնագիտություններով՝

<u>Միջին մասնագիտական կրթական համակարգ</u>՝
0916.01.5 - «Դեղագործություն»
0412.01.5 - «Ֆինանսներ»
0414.01.5 - «Շուկայաբանություն»
0411.01.5 - «Հաշվապահական հաշվառում»
0413.02.5 - «Սպասարկման կազմակերպում»
0112.01.5 - «Նախադպրոցական կրթություն»
1012.02.5 - «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»
0613.02.5- «Համակարգչային գեղարվեստական նախագծում»
0613.01.5 - «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»

<u>Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգ</u>
1013.03.4 - «Խոհարարական գործ»
1012.01.4 - «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»
0723.03.4 - «Կարի արտադրության տեխնոլոգիա»
0611.01.4 -«Համակարգչային շահագործում»
0721.03.4 - «Գինեգործություն և հյութերի արտադրություն»

<u>Կարճաժամկետ ուսուցում՝ 2-ից մինչև 6 ամսյա տևողությամբ</u>
«Հասարակական սնունդ»
«Վարսավիրական արվեստ»

«Դիմահարդարում/կոսմետոլոգիա»
«Կարի արտադրության տեխնոլոգիա»
« Համակարգիչների շահագործում»
«Մատնահարդարում»
« Հաշվապահական հաշվառում ՀԾ և Excel ծրագրերի միջոցով»

Քոլեջն իր գործունեության ընթացքում արժանացել է բազմաթիվ խրախուսանքների, պատվոգրերի, շնորհակալագրերի: Տնտեսագիտական բաժնի ուսանողները մասնագիտական հաղթանակներ ու պատվոգրեր ունեն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից անցկացված ″Brain ring″տնտեսագիտական մրցույթներից, Ֆինանսերի հաշտարարի գրասենյակի կողմից հեռավար տարբերակով անցկացված մրցույթից:

2019թ. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական գործակալության կողմից ԱՊՔ–ին տրվել է շնորհակալագիր՝ զբաղվածության տարածքային կենտրոնի հետ ակտիվ համագործակցության համար:

2019թ. հունիսի 3-7-ն ընկած ժամանակահատվածում ԱՊՔ-ի տնօրեն Է. Գ. Գասպարյանը Իտալիայի Թուրին քաղաքում մասնակցել է Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՌԴ և International Trainig Center of the ILO (ITC/ILO) կազմակերպության համատեղ կազմակերպված ուսումնական ծրագրին՝ «Ռազմավարական ստրատեգիայի օգտագործումը պրոֆեսիոնալ կադրերի նախապատրաստման գործընթացում» թեմայով և ստացել է վկայական:

2019-2020 ուստարվա տվյալներով ԱՊՔ-ի արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգերում սովորում է շուրջ 406 ուսանող: Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքները դրված են բարձր հիմքերի վրա: Այդ աշխատանքների արդյունավետությունն ապահովելու համար քոլեջի տնօրինությունն ստեղծել է բոլոր պայմանները. ձմեռային շրջանում ապահովված է ջեռուցմամբ՝ ուսումնական գործընթացն առանց ընդհատումների՝ ուսումնական պլաններով նախատեսված ժամանակացույցին համապատասխան կազմակերպելու համար:

Քոլեջի ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաները կազմակերպվում են ինչպես քոլեջում, այնպես էլ Արարատի մարզի տարբեր կազմակերպություններում: Տնտեսագիտական բաժինների ուսանողները պրակտիկան անցկացնում են տարբեր կազմակերպություններում՝ նախապես պայմանավորվածության հիման վրա, ինչպես օրինակ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Արարատի մ/ճ-ում, «ԱԿԲԱ-Կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի «Վեդի» և «Արաքս» մասնաճյուղերում, ՀՀ Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնքապետարանում, ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի «Արարատցեմենտ» ՓԲԸ-ում և շատ այլ վայրերում: «Գինեգործություն և հյութերի արտադրություն» արհեստագործական բաժնի ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաները և լաբորատոր գործնական պարապմունքները, որոնք հնարավոր չեն անցկացնել քոլեջի նյութատեխնիկական բազայի հիման վրա, անցկացվում են համապատասխան ձեռնարկություններում և հաստատություններում՝ համաձայն քոլեջի տնօրինության և այդ ձեռնարկությունների և հաստատությունների միջև կնքված պայմանագրերի, ինչպես օրինակ՝ «Տավինկո» կոնյակի գործարանում և «ԱՐՄԳԱՐ ՊՐՈ» հյութերի և գինու արտադրամասում:

Քոլեջը հիմնականում ապահովված է երկարամյա փորձ ունեցող, ինչպես նաև երիտասարդ, բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներով (84 % -ը բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող դասախոսներ են), ովքեր իրենց մասնագիտական հմտությունները կատարելագործում են՝ պարբերաբար մասնակցելով ՄԿՈՒԶԱԿ-ի և ԱՊՔ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Ըստ 2015-2019թթ. տվյալների՝ ԱՊՔ-ն ունեցել է 659 շրջանավարտ, որից 110–ը՝ «Սպասարկման կազմակերպում» և 23-ը «Ֆինանսներ» մասնագիտությունից, վերջիններս տվյալ մասնագիտության ԱՊՔ-ի առաջին շրջանավարտներն են: Այս ուստարում ունեցել ենք ևս 169 շրջանավարտ, որից՝ 29-ը և 20 շրջանավարտներ

համապատասխան բաժիններից: ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջի շրջանավարտների 31%-ն աշխատում է տնտեսության այս կամ այն ոլորտում, իսկ նրանցից մոտ 14%-ը աշխատում է ձեռք բերած մասնագիտության ոլորտում: ԱՊՔ-ի գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներն իրենց ուսումը շարունակում են ՀՀ ԲՈՒՀ-երի համապատասխան մասնագիտության երկրորդ կամ երրորդ կուրսերում: ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո աշխատում են տարբեր ոլորտների կառավարման վերին և միջին օղակներում: Քոլեջի ուսանողների գրեթե 70%-ը գյուղական համայնքներից են, որը նպաստում է «Գինու և հյութերի արտադրության մեքենայական բաժանմունքի օպերատոր»-ի որակյալ կադրերի պատրաստմանը, քանի որ նրանցից շատերը հետագայում զբաղվում են գյուղատնտեսական գործունեությամբ: 2019թ. մարտի 26-ին ԵՄ պատվիրակությունը և Եվրոպական կրթական հիմնադրամի ներկայացուցիչները ներկա են գտնվել ԱՊՔ-ի գինեգործության լաբորատորիայի բացման արարողությանը՝ ընդգծելով մասնավոր հատվածի և կրթական ոլորտի համագործակցության կարևորությունը, առաջարկելով գինեգործական ընկերություններին սերտորեն համագործակցել գինեգործության ոլորտում ուսուցում ապահովող կրթական հաստատությունների հետ: Գինեգործության լաբորատորիան հաջողությամբ մեկնարկել է դասընթացերը և արդեն տվել իր 15 շրջանավարտները: Քոլեջում պահվում է նրանց կողմից պատրաստված սպիտակ գինի: Եթե ՊՈԱԿ-ներին հնարավորություն ընձեռնվի ձեռներեցությամբ զբաղվել, ապա վաճառքից ստացված շահույթը հնարավորություն կտա մեծացնել ԱՊՔ-ի ֆինանսական ռեսուրսները: Քոլեջը համագործակցել է GIZ (Գերմանական տեխնիկական համագործակցություն) միջազգային կազմակերպության հետ, որը կարևոր խթան է հանդիսացել քոլեջի զարգացման գործում: Քոլեջը մասնակցում է Եվրամիության կրթական ծրագրերի իրականացմանը. ՎՈՐԼԴ ՎԻԺՆ հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Երիտասարդների զբաղունակության և հմտությունների զարգացման» կարճաժամկետ ծրագրին, որը ֆինանսավորվում է «ԵՄ–ն հանուն երիտասարդների» նախաձեռնությամբ: ԱՊՔ-ում գործում է SKYE ակումբ, ուր ներգրավված են մեծ թվով երիտասարդներ՝ իրենց ակտիվ գործունեությամբ նպաստելով համայնքի զարգացմանը:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:***

Չափորոշիչ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:	
Հիմքեր	ԱՊՔ-ի կանոնադրություն.pdf ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ»ՊՈԱԿ-ի 2013-2018 թթ.զարգացմանևբարեփոխմանհայեցակարգ.pdf ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ ուսումնական մասի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ Վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2020-2025թթ. Զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ շրջանավարտների և հասարակության հետ կապերի ստորաբաժանման զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ տնտեսագիտական հանձնաժողովի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ ՔՊ շտաբի զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ լեզուների հանձնաժողովի զարգացման պլան.pdf Նախնական մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի զարգացման ծրագիր.pdf Միջին մասնագիտական և նախանական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիաներ.pdf

Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱՊՔ-ն իր գործունեությունն իրականացնում է կանոնադրության, ռազմավարական ծրագրի և առաքելության հիմնախնդիրներին համապատասխան, որոնք ելնում են ՀՀ «Միջին մասնագիտական կրթության մասին» օրենքից և ՈԱՇ–ի պահանջներից: Քոլեջը, որպես կրթօջախ, իր գործունեությունը ծավալում է լիցենզիային համապատասխան, որից էլ դասավանդվող բոլոր ՄԿԾ-ները լիցենզավորված են /հավելված՝ Միջին մասնագիտական և նախանական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիաներ.pdf/:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019թ.-ի դեկտեմբերի 3-ի 1167–Ա/2 հրամանի՝ 2012թ. փետրվարի 6-ին գրանցված ԱՊՔ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ են կատարվել, որը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից և 2019թ. դեկտեմբերի 18-ին գրանցվել ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում /հավելված՝ ԱՊՔ-ի կանոնադրություն.pdf/: ԱՊՔ–ն մինչև 2018թ. չի ունեցել մշակված և հաստատված ռազմավարական ծրագիր: Չնայած դրան, քոլեջի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները և դրանց իրականացման հնարավոր ուղիներն արտացոլվել են ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2013-2018թթ. զարգացման և բարեփոխման հայեցակարգում /հավելված՝ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2013-2018թթ. զարգացման և բարեփոխման հայեցակարգ.pdf/, ինչպես նաև

ԱՊՔ-ի փաստաթղթաշրջանառությունում: 2018թ. քոլեջը մշակեց իր առաջին ռազմավարական ծրագիրը /հավելված՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf/, որն ընդգրկում է 2018-2023թթ., որը քննարկվել և հաստատվել է քոլեջի կառավարման խորհրդի նիստում: Զարգացման տարբեր ծրագրեր ունեն նաև ԱՊՔ-ի տարբեր ստորաբաժանումները /հավելվածներ՝ ԱՊՔ ուսումնական մասի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf, ԱՊՔ վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2020-2025թթ. զարգացման ծրագիր.pdf, ԱՊՔ շրջանավարտների և հասարակության հետ կապերի ստորաբաժանման զարգացման ծրագիր.pdf, ԱՊՔ տնտեսագիտական հանձնաժողովի 2019-2020 թթ. զարգացման ծրագիր.pdf, ԱՊՔ ՔՊ շտաբի զարգացման ծրագիր.pdf, ԱՊՔ լեզուների հանձնաժողովի զարգացման պլան.pdf, նախնական մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի զարգացման ծրագիր.pdf/: Նպատակների արդյունավետ իրականացման համար տարբերակվում են ներկա ժամանակաշրջանի խնդիրները, առաջնահերթության սկզբունքով՝ հաշվի առնելով կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքները, արդի պահանջները, որոնք կբարձրացնեն միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության վարկանիշը՝ ՈԱՇ-ի պահանջներին համապատասխան: Նպատակները սահմանվել են՝ հաշվի առնելով SMART չափանիշները: ԱՊՔ-ի ռազմավարական պլանը գործողությունների ծրագիրն ուղղորդում է սահմանված ժամանակահատվածում ի կատար ածելուն՝ նպաստելով նրա արդյունավետության բարելավմանը /հավելված՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf/:

ԱՊՔ-ի տեսլականը. Մինչև 2023 թվականը ԱՊՔ-ն կդառնա որակյալ կրթություն տրամադրող, նորարարական ուսանողամետ ուսուցում իրականացնող, սովորողների և աշխատողների շրջանում կատարելության սկզբունքները խրախուսող, ուսանողներին բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակող, հասարակության ամենատարբեր շերտերին մատչելի և ընտրության լայն հնարավորություններ ընձեռող, բարենպաստ միջավայր և լրացուցիչ կրթություն տրամադրող ուսումնական հաստատություն:

Անշուշտ, ԱՊՔ-ի համար տեսլականը գործիք է՝ նպատակներին հասնելու համար և, վերջինիս ուղղությամբ կենտրոնացումը կրկնապատկում է այդ նպատակներին հասնելու ցանկությունը:

ԱՊՔ – ի առաքելությունը. ԱՊՔ-ն իր առաքելության առաջնային դերակատարությունը տալիս է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ ուսուցման և ուսումնառության կազմակերպմանը, իր գործունեությունը նպատակաուղղում տնտեսագիտական, մանկավարժական և սպասարկման կրթության իրականացմանը:

Ռազմավարական պլանը ծառայում է նաև որպես կազմակերպության արտաքին հաղորդակցության և մարքեթինգի գործիք, օգնում է ԱՊՔ-ի ծրագրերի մշակմանը՝ ներառելով քոլեջի գործունեության ոլորտում առկա կարիքների և քոլեջի արտաքին ու ներքին շահառուների կարիքների ուսումնասիրումը: Այդ խնդիրներից են՝ մասնագիտական պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումները, դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների բարելավումը, որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործումը և հզորացումը, դասախոսական կազմի համալրումն ու կատարելագործումը, տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ստեղծումը, հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը, ժամանակակից պահանջները բավարարող ենթակառուցվածքների ձևավորումը, ուսանողական օժանդակ ծառայությունների զարգացումը, ուսանողական կազմակերպությունների աշխատանքի խթանումը, լրացուցիչ կրթության միասնական համակարգի զարգացումը՝ ապահովելով հանրային պահանջարկի և քոլեջի առաջարկի միջև փոխկապվածությունը մարքեթինգային գործիքների կիրառմամբ և ֆինանսական միջոցների

անհրաժեշտ ներհոսքի ապահովմամբ: Վերջին տարիներին ԱՊՔ-ն ավելացրել է առաջարկվող կրթական ծրագրերի ցանկը թե՛ միջին մասնագիտական, թե՛ նախնական մասնագիտական (արհեստագործական) մասնագիտությունների գծով՝ պատրաստելով ավելի պահանջված, որակյալ, աշխատաշուկայում մրցունակ մասնագետներ /«Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Գինեգործություն և հյութերի արտադրություն» և այլ մասնագիտությունների ներդրումը/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Հիմքեր	Որակի հայեցակարգ.pdf Կրթության ներքին որակի կանոնակարգ.pdf Ուսանողական խորհրդի կանոնադրություն.pdf Կառավարման խորհրդի կազմ.pdf Ուսանողների օգնության հատկացման կարգ.pdf Կարիերայի կենտրոնի պատասխանատուի գործունեության կանոնակարգ.pdf Կառավարման խորհրդի կանոնակարգ.pdf ԱՊՔ տնօրենի, բաժնի վարիչների, մանկավարժների, ուսանողների իրավունքներն ու պարտականությունները.pdf

Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Արարատի պետական քոլեջի ներքին և արտաքին շահակիցներն են՝ ուսանողները, դասախոսական կազմը, ուսումնաօժանդակ անձնակազմը, շրջանավարտները, ծնողները, ՀՀ կառավարությունը, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, գործատուները: Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են քոլեջի կառավարման մարմիններում և մշտապես կարծիքներ հայտնելու, առաջարկություններ անելու հնարավորություն ունեն, և այն նաև ռազմավարական ծրագրի հիմնարար արժեքներից մեկն է /հավելվածներ՝ Կառավարման խորհրդի կազմ.pdf, Կառավարման խորհրդի կանոնակարգ.pdf, Մանկավարժական խորհրդի կանոնակարգ.pdf/: Ուսանողը, բացի դասախոսություններին մասնակցելուց, գնահատում է դասախոսական կազմի գործունեության ակտիվությունը /հավելված՝ Որակի հայեցակարգ.pdf, Հարցաթերթիկի օրինակ.pdf/: Ուսումնառողները ներգրավված են քոլեջի կառավարմանը և քոլեջի կողմից իրականացվող ծրագրերին: ԱՊՔ-ն այսօր լուրջ բարեփոխումների ժամանակաշրջան է ապրում և այդ շրջանակներում գործատուներին ներգրավել է հաստատության բոլոր մակարդակներում, ինչպես, օրինակ, ՀՀ մասնավոր հատվածների գործատուներ ներգրավված են արհեստագործական համակարգի ՄԿԾ-ների քննարկմանը /«Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտություն՝ աշխատանքի վրա հիմնված/, ինչը հետագայում ավելի դյուրին կդարձնի համագործակցությունը և հետադարձ կապը նրանց հետ: Քոլեջի դասախոսական կազմը համալրված է գործատու վարպետներով: Հարցումներ են անցկացվում նաև գործատուների շրջանակներում պրակտիկայի բաժնի վարիչի և ԱՊՔ – ի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարների կողմից, որոնց միջոցով վեր են հանվում ծրագրային խնդիրները: Ի դեպ, օրենսդրական որոշ կետեր թույլ չեն տալիս կատարել ծրագրային փոփոխություններ: Փոփոխությունները կատարվում են միայն 10%-ի չափով: ԱՊՔ-ն առանձին ծնողական խորհուրդ չունի, սակայն ուսումնական տարվա ընթացքում իրականացվող ծնողական ժողովների ժամանակ նրանց կողմից բարձրացված հարցերը տնօրինության ուշադրության ներքո են: Դասախոսները կարողանում են վեր հանել իրենց կարիքները մանկավարժական խորհրդի նիստերում: Այս ամենը նպաստում է

թափանցիկ աշխատանքին, որը ելնում է ռազմավարական ծրագրի պահանջներից: Մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և հսկողության իրականացման, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծառայությունների մատուցման որակի բարելավման, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել է ԱՊՔ-ի 2019-2020թթ. ներքին գնահատում և ներկայացվել հաշվետվություն՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, դասախոսների աշխատանքի արդյունավետության և ուսանողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով՝ հիմք ընդունելով ԱՊՔ ներքին և արտաքին գնահատման չափանիշների և իրականացման կարգը: Այն ապագայում հիմք կհանդիսանա հաջորդ ռազմավարական ծրագիրը մշակելու համար /հավելված՝ ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Հիմքեր	Որակի հայեցակարգ.pdf Կառավարման խորհրդի կազմ.pdf ՈՒսանողական խորհրդի կանոնադրություն.pdf ԱՊՔ –ի աշխատանքային խորհուրդներ և հանձնաժողովներ.pdf ԱՊՔ-ի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլան.pdf ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf 2019-2020 ուսումնական տարվա որակի ապահովման ենթակառուցվածքի հաշվետվություն.pdf 2019-2020 ուսումնական տարում ԱՊՔ տնօրենի կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf Դիմումների, առաջարկությունների, կարծիքների արտահայտման մատյան.pdf

Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

ԱՊՔ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման, արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր /հավելված՝ Որակի հայեցակարգ.pdf/:

Կազմվում են կարճաժամկետ տարեկան ծրագրեր, որոնք բխում են ռազմավարական ծրագրի հիմնախնդիրներից /հավելված՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf/: Արարատի պետական քոլեջի առաքելությունը սահմանվում է հիմնադիր փաստաթղթի՝ կանոնադրության մեջ (հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. հունվարի 20-ի թիվ 36Ա/Ք հրամանով): Կանոնադրության 2-րդ կետում /հավելված՝ ԱՊՔ-ի կանոնադրություն.pdf/ մասնավորապես նշվում է, որ քոլեջի գործունեությունը նպատակաուղղված է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության որակի ապահովմանը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան և ուսուցման տարբեր ձևերով ու կրթական ծրագրերով: Արարատի պետական քոլեջի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակա բոլոր նպատակները հստակեցվում են կարճաժամկետ տարեկան պլաններում, ինչը հնարավորություն է տալիս վերահսկելու զարգացման ռազմավարական ծրագրերի ընթացքը /հավելված՝ ԱՊՔ-ի 2019-

2020թթ. աշխատանքային պլան.pdf/: Քոլեջի նպատակների իրագործման գնահատման կանոնակարգերի մեջ առանձնանում են ուսումնական և ֆինանսատնտեսական գործունեության մասին տնօրենի և ստորաբաժանումների (որակի ապահովման ենթակառուցվածքի, հաշվապահի, բաժինների) տարեկան հաշվետվությունները /հավելվածներ՝ ԱՊՔ տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf, 2019-2020 ուստարվա որակի ապահովման ենթակառուցվածքի հաշվետվություն.pdf/:

Նպատակների և առաքելության իրականացման արդյունքների արդյունավետ գնահատման համար անհրաժեշտ է շահակիցների մասնակցությունը ոչ միայն ռազմավարական ծրագրի մշակմանը, այլև կարճաժամկետ որոշումների ընդունման գործընթացին: ԱՊՔ-ի կանոնադրության 4-րդ կետով սահմանվում է, որ քոլեջի կառավարման բարձրագույն մարմնում՝ խորհրդում, պետք է ներգրավված լինեն 11 անդամներ՝ դասախոսական կազմից, ուսանողներից, ինչպես նաև պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից և գործատուներից /հավելված՝ Կառավարման խորհրդի կազմ.pdf/: Նշանակալից է այն, որ ուսանողությունը կարողանում է իր էական ձայնն ունենալ ընդունվող որոշումներում /հավելված՝ ՈՒսանողական խորհրդի կանոնադրություն.pdf/:

Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:
Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
1.Քոլեջն ունի հստակ ձևակերպված տեսլական և առաքելություն, ռազմավարական նպատակներ, որոնք համապատասխան են ՀՀ կրթության ՈԱՇ-ին /հիմք՝ ԱՊՔ-ի կանոնադրություն, ԱՊՔ-ի ռազմավարական պլան 2018-2023թթ./ 2.Քոլեջի տարբեր ստորաբաժանումների գործընթացները կանոնակարգող անընդհատ փաստաթղթաշրջանառություն /հիմք՝ մշակված կանոնակարգեր և ընթացակարգեր, իրավական ակտեր, ուսումնական պլաններ, ստորաբաժանումների զարգացման ծրագրեր, աշխատանքային պլաններ և այլն/ 3.Ռազմավարական ծրագրի համապատասխանություն առաքելությանն ու նպատակներին 4.ՈԱԿ – ի կողմից մշակված մեխանիզմներ շահակիցների կարիքների վերհանման համար /մշակված հարցաթերթիկներ՝ կազմված որակի պատասխանատուի կողմից/ 5.Ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածություն քոլեջի կառավարման խորհրդում /հիմք՝ կառավարման խորհրդի կազմ/ 6.Քոլեջի դրական իմիջը և նրա տեղն ու դիրքը կրթական շուկայում /շրջանավարտների արձագանքներ, ուսանողական խորհուրդ/ 7.Արհեստավարժ ու փորձառու վարչական, ուսումնաօժանդակ և դասախոսական կազմ 8.Մոտիվացված դասավանդողներ և ուսանողներ	1. Արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը արդյունավետության գնահատմանը /ընդգրկել նաև ծնողներին/
Հնարավորություններ	***Ռիսկեր***
1.Աշխատաշուկայի մասնագիտացված՝ տնտեսագիտական, նախադպրոցական և սպասարկման ոլորտի որակյալ մասնագետներով	1.Առանձին նույն մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնող քոլեջներ մարզում

ապահովելու գործում քոլեջի գերակշռող դիրքը մարզում 2.Արտաքին շահակիցների հետ համագործակցության ընդլայնում /կապված նոր մասնագիտությունների ներդրմամբ /հիմք՝ ԱՊՔ-ի ռազմավարական պլան 2018-2023 թթ./ 3.Ձեռնարկատիրական գործունեությամբ նյութատեխնիկական բազայի նորացում և հարստացում, մասնագիտական կատարելագործման հնարավորություն /հիմք՝ ԱՊՔ-ի կանոնադրություն/	2.ՀՀ-ում կրթության ոլորտում կիրառվող քաղաքականության փոփոխություններ 3.Աշխատաշուկայի պահանջարկի փոփոխություն 4.Տնտեսական ճգնաժամ
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝ ***ա/ մեծացնել համագործակցությունների շրջանակը,*** ***բ/ արտաքին և ներքին շահակիցների ավելի ընդգրկուն մասնակցություն քոլեջի գործառույթներին :***	

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:	
Հիմքեր	Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf Կառավարման խորհրդի կանոնակարգ.pdf Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկեր.pdf Ֆինանսների տնօրինման ընթացակարգ.pdf Տնօրենի ընտրության մրցութային ընթացակարգ.pdf Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի աշխատանքի կազմակերպման կանոնակարգ.pdf Քոլեջի տնօրենի և մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման, պաշտոնից ազատման մեխանիզմների կանոնակարգ.pdf Տնօրինական խորհրդի կանոնակարգ.pdf Տնօրենի օգնականի կանոնակարգ.pdf Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի գործունեության կանոնակարգ.pdf Միջին մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի ընթացակարգ.pdf Նախնական մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի ընթացակարգ.pdf Մանկավարժական աշխատողների իրավասությունների և գործունեության կանոնակարգ.pdf

Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանո՞վ է այն հասանելի անձնակազմին:

ՄՈՒՀ-ն իր բոլոր գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում է ռազմավարական ծրագրով, որի հիմնախնդիրը կառավարման արդյունավետությունը և վերջնական ծառայությունների ի կատար ածումն է: Ըստ այդ հիմնախնդրի՝ կառուցողական համագործակցություն պիտի զարգանա քոլեջի կառավարման, ուսանողական, դասախոսական և այլ խորհուրդների միջև: Այդ հիմնախնդրով կարևորվում է ուսանողների ներգրավվածությունը կառավարման տարբեր մարմիններում:

Արարատի պետական քոլեջի կառավարումն իրականացվում է «Կրթության մասին», «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով և ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված քոլեջի կանոնադրությանը համապատասխան, քոլեջի կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի և տնօրենի գործառույթների իրականացմամբ: Քոլեջի կառավարումն իրականացվում է ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ: ԱՊՔ-ում 2020թ. հունվարից կատարվել է կառուցվածքային փոփոխություն ուսումնական մասում. ավելացել են մի շարք հաստիքներ /հավելված՝ Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկեր.pdf/:

Քոլեջի կառավարման համակարգն ունի՝

1. Հիմնադիր և պետական կառավարման լիազոր մարմիններ, որոնք իրականացնում են քոլեջի կառավարումը;

2. Քոլեջի խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, տնօրեն, որոնց միջոցով իրականացվում է ընթացիկ կառավարումը:

Քոլեջի խորհուրդը քոլեջի կառավարման բարձրագույն մարմինն է, որի լիազորության ժամկետը 5 տարի է: Քոլեջի խորհուրդը քննարկում և հաստատում է քոլեջի բյուջեն, քոլեջի զարգացման ռազմավարական պլանը, լսում և գնահատում է քոլեջի տարեկան գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը, ընտրում է քոլեջի տնօրեն:

Քոլեջի **մանկավարժական խորհուրդը** խորհրդակցական մարմին է, որը քոլեջի խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, սահմանված կանոնակարգով, իրեն տրված լիազորությունների շրջանակներում, քննարկում է համապատասխան ոլորտներին վերաբերող հարցեր:

Քոլեջի գործունեության տարբեր ոլորտների անմիջական ղեկավարումն ու համակարգումն իրականացնում է քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ով նշանակվում է տնօրենի հրամանով:

Քոլեջի կողմից ընդունված որոշումները միտված են քոլեջի առաքելությանն ու նպատակների իրականացմանը և կյանքի են կոչվում տնօրենի կողմից արձակված հրամաններով կամ հրահանգներով: Քոլեջը, պահպանելով արդյունավետ կառավարման, հաշվետվողականության և թափանցիկության նորմերն ու կանոնները, ծառացած խնդիրների ու առաջարկությունների հիման վրա հիերարխիայի սկզբունքով քննարկում է ստորին օղակից (ամբիոն) մինչև վերին օղակը՝ ապահովելով կարևորագույն խնդիրների լայն քննարկումներ:

Այսպիսով, քոլեջում որոշումների կայացման գործընթացը լիովին համապատասխանում է կառավարման էթիկայի երեք հիմնական սկզբունքներին.

ա. Որոշումների լեգիտիմություն. ապահովում է այնպիսի որոշումների ընդունմամբ, որոնց լիազորությունները սահմանվում են քոլեջի գործունեության վրա ազդող իրավական նորմերով;

բ. Որոշումների արդարություն. ապահովում է որոշումների ընդունման գործընթացում շահակիցների ներգրավմամբ;

գ. Արդյունավետություն. ապահովում է ռազմավարական նպատակներին համապատասխանությամբ:

Ներկայումս ԱՊՔ-ում մեծ ուշադրություն է դարձվում անձնակազմի իրական ներուժի գնահատմանը և կարիերայի աճին /հավելված՝ Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կանոնակարգ.pdf/:

Քոլեջի ուսումնական գործընթացների, ինչպես նաև ֆինանսական և տնտեսական գործունեության վարչարարությունն ու կառավարումն իրականացվում է բաժինների և այլ ստորաբաժանումների միջոցով: Վերջինս գալիս է հավաստելու, որի բազմակողմանի գործառույթներն իրականացնելու համար կառավարման համակարգն ապահովված է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներով: Քոլեջում դասավանդում են ինչպես բազմամյա փորձ ունեցող դասախոսներ, այնպես էլ երիտասարդ կադրեր: Սեփականության և օգտագործման իրավունքով՝ քոլեջը տիրապետում է գույքի, շենք-շինությունների: Ֆինանսական քաղաքականությունն իրականացվում է մշակված քաղաքականության համաձայն, օրենսդրությամբ, հաստատության ներքին իրավական ակտերով տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվով, հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ, որոնք հիմք են հանդիսանում ֆինանսական գործունեության իրականացման համար: Քոլեջի ֆինանսական ռեսուրսներն ուղղվում են կանոնադրական և ռազմավարական խնդիրների իրականացմանը: Ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական բյուջեից, վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձավճարներից, կարճաժամկետ ծրագրերից և այլ մուտքերից: Ֆինանսական միջոցները քոլեջի ռեսուրսային բազայի հիմքն են և ծախսերը պլանավորվում են՝ հիմք ընդունելով, մասնավորապես, ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունները, ինչպես նաև՝ ելնելով ֆինանսական կարողություններից: Ծախսերը նույնպես պլանավորվում են՝ ելնելով քոլեջի ֆինանսական կարողություններից: Տարեկան ծախսերի հոդվածները ցույց են տալիս, որ ֆինանսական միջոցները օգտագործվում են ներքին պահանջներից ելնելով: Քոլեջի աշխատակիցների աշխատանքի ընդունումը, տեղափոխումը, հեռացումը, առաջխաղացումը, խրախուսումը և տույժերն իրականացվում են ըստ ՀՀ Սահմանադրության, «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» /գլուխ 12.15.22/, «Կրթության մասին օրենքի», այլ օրենքների ու իրավական ակտերի, համապատասխան ներքին

կանոնակարգերի, Քոլեջի կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների:
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Հիմքեր	ԱՊՔ-ի 2019-2020թթ. աշխատանքային պլան.pdf Մանկավարժական աշխատողների իրավասությունների և գործունեության կանոնակարգ.pdf ՀՀ ԿԳՄՍ նախարարի 21.01.2020թ-ի 01/08.1/1166-20 հաստատված հաստիքացուցակ.pdf ԱՊՔ ուսումնական մասի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2020-2025թթ. զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ շրջանավարտների և հասարակության հետ կապերի ստորաբաժանման զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ տնտեսագիտական հանձնաժողովի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ ՔՊ շտաբի զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ լեզուների հանձնաժողովի զարգացման պլան.pdf Նախնական մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի զարգացման ծրագիր.pdf Տնտեսագիտական ամբիոնի ընթացակարգ.pdf Լեզուների ամբիոնի ընթացակարգ.pdf ՈՒսանողական խորհրդի կանոնադրություն.pdf

Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:

Քոլեջի կառավարման խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, ուսանողական խորհուրդը և գործող կանոնադրությունն ու ստորաբաժանումների կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են ընձեռում ներգրավել կառավարման գործընթացում, ինչպես հարցերի քննարկմանը, այնպես էլ դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը, ինչն առավել թափանցիկ է դարձնում քոլեջի գործունեությունը:

Ինչպես ցույց է տալիս վերջին 3 տարիների կառավարման գործընթացի ուսումնասիրությունը, քոլեջում այն բավականին արդյունավետ է եղել: Այսպես՝ կառավարման խորհրդի կազմում ընդգրկված է դասախոսական կազմից 2 ներկայացուցիչ և 3 ներկայացուցիչ՝ ուսանողական կազմից /հավելված՝ Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf/, ովքեր համապատասխանաբար ընտրվել են դասախոսական համակազմից և ուսանողական խորհրդի կողմից: Նրանք, մասնակցելով կառավարման խորհրդի նիստերին, իրենց դատողություններն ու առաջարկություններն են ներկայացնում օրակարգի և ընթացիկ հարցերի վերաբերյալ:

Մանկավարժական խորհուրդը քոլեջի հիմնական ընթացիկ կառավարման մարմինն է, որը նիստեր է գումարում առնվազն 2 ամիսը մեկ անգամ, որտեղ մասնակցում է դասախոսական և վարչական ողջ կազմը: Անհրաժեշտության դեպքում հրավիրվում է նաև ուսանողական խորհրդի նախագահը:

Ուսանողական խորհուրդը ուսանողության ներկայացուցչական ինքնակառավարման մարմին է, որն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական զարգացմանը:

Ուսանողական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ գործող օրենսդրությանը, քոլեջի ներքին կարգապահական կանոններին, քոլեջի կանոնադրությանը և ուսանողական խորհրդի կանոնադրությանը համապատասխան: Առաջարկություններ է ներկայացնում քոլեջի տնօրինությանը և կառավարման խորհրդին:

Այսպիսով՝ քոլեջի դասախոսական անձնակազմը և ուսանողները կառավարման գրեթե բոլոր

մակարդակներում անմիջականորեն մասնակցում են որոշումների ընդունման գործընթացին, նրանց մասնակցությունը կառավարման մարմիններում կանոնակարգված է, իսկ նրանց ընտրությունը այդ մարմիններում իրականացվում է ըստ գործող ընթացակարգերի և քոլեջի ներքին կարգապահական կանոնների: Դրան նպաստում է նաև քոլեջի ներքին կարգապահական կանոնների այն կետերը, որոնք վերաբերում են ուսանողների և դասավանդողների իրավունքներին և պարտականություններին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր	ԱՊՔ-ի 2019-2020 թթ աշխատանքային պլան.pdf ԱՊՔ տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf

Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:

Քոլեջը, որպես միջին մասնագիտական կրթություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ ելնելով գործունեության բնույթից, իրականացնում է պլանավորում, որպես գործընթաց, որը պայմանավորված է քոլեջի առաքելությամբ: Այն դրսևորվում է 2 մակարդակով՝ ռազմավարական պլանավորում և ընթացիկ տարեկան պլանավորում: Այդ մակարդակներից յուրաքանչյուրն ունի իր իրագործման մեխանիզմները: Պլանավորման 1-ին մակարդակն ուղղված է քոլեջի զարգացման և բարեփոխումների երկարաժամկետ պլանավորմանը, իսկ երկրորդը՝ ուսումնական գործընթացի օպերատիվ պլանավորումն է:

Կարճաժամկետ գործառնական պլանավորումը իրականացվում է ԱՊՔ-ի բոլոր ուղղություններով՝ ֆինանսական, մարդկային ռեսուրսների, գույքի, կրթական ծրագրերի և այլն, ինչը հստակ կերպով արտահայտվում է տնօրենի տարեկան հաշվետվություններում /հավելված՝ ԱՊՔ տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf/:

Տարեկան պլանների իրականացումն ու գնահատումը կատարվում է կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի, ստորաբաժանումների և տնօրենի հաշվետվությունների հիման վրա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր	2019-2020 ուստարվա որակի ապահովման ենթակառուցվածքի հաշվետվություն.pdf ԱՊՔ տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf

Նշել վերջին երեք տարիներին հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրությունն ու վերլուծությունը պարբերաբար իրականացվող ներքին գործընթացներն են, որոնք շարունակաբար իրականացվում են ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով: ՈՒսումնասիրություններից ստացված տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա կատարվում են ճշգրտումներ՝ ռազմավարական ծրագրին համապատասխան:

Հաստատության ներսում մեծ ուշադրություն է դարձվում ուսուցման որակի վրա ազդող ներքին գործոնների բացահայտման, ուսումնասիրման և բարելավման աշխատանքներին: Շենքային պայմանները, ներքին կահավորվածությունը համապատասխանում են նորմերին (գինեգործության և «Արմաթ» լաբորատորիաներ, հագեցած առարկայական կաբինետներ): Բացասաբար են անդրադառնում ոչ բարեկարգ սպորտդահլիճը, փոխադրամիջոցների բացակայությունը, ինչպես նաև

ֆինանսական միջոցների սակավությունը: ՈՒսուցման որակի բարելավման նպատակով քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են վերապատրաստման դասընթացների, համալրվում է մասնագիտական նոր գրականության ցանկը:

Այսպիսով, քոլեջի գործունեության վրա ազդող այնպիսի արտաքին գործոնների, ինչպիսիք են ընդունելությունը, ֆինանսական համակարգը, աշխատաշուկայի հասարակական պահանջները, օրենսդրական փոփոխությունները, և ներքին գործոնները՝ երիտասարդ դասախոսական կազմի հոսունությունը, լաբորատոր գործիքակազմի ապահովվածությունը, ենթակառուցվածքների աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը և այլն, ուսումնասիրվում, վերլուծվում են ստորաբաժանումների կողմից և արտացոլվում են տնօրենի տարեկան հաշվետվություններում, կառավարման խորհրդի որոշումներում:

Քոլեջի ընդունելության, ուսումնական գործընթացի կազմակերպման որակի վրա զգալիորեն ազդում են այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են փոխադրամիջոցների բացակայությունը: Վերջինս պայմանավորված է մոտակա գյուղերից մեծ թվով ուսանողների առկայության հետ:

Ներքին շահակիցները՝ ներգրավված են բոլոր ստորաբաժանումներում (ուսանողները՝ կառավարման խորհրդի կազմում): Արտաքին գործոնների փոփոխությունները բարդացնում են առաքելության և նպատակների, արտաքին և ներքին շահակիցների բավարարման խնդիրը:

Քոլեջի ղեկավարությունը վճռական է տրամադրված տարբեր աղբյուրների միջոցով լրացուցիչ ֆինանսական ներհոսքի ապահովմամբ քոլեջի առջև դրված խնդիրները լուծելու, առաքելությունը և նպատակները լիարժեքորեն իրականացնելու և աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտներ պատրաստելու կարևորագույն հարցի շուրջ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Հիմքեր	Կրթության ներքին որակի կանոնակարգ.pdf Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf Որակի հայեցակարգ.pdf

Վերլուծել որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Նշել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

Համաձայն ԱՊՔ-ի կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի կանոնակարգի և որակի հայեցակարգի՝ որակի կառավարման համակարգի շրջանակներում իրականացվում են որակի ապահովման հետևյալ սկզբունքները.

- Համակարգված մոտեցում որակի ապահովման գործընթացների նկատմամբ;
- Որակի ապահովման գործընթացների շուրջ ժողովրդավարական և բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում;
- Որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների թափանցիկություն;
- Բոլոր մակարդակների հաշվետվողականություն;
- Որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների անընդհատություն;
- ՄՈՒՀ-ի բոլոր գործընթացներում որակի ապահովման շրջափուլի ինտեգրում;
- Ծրագրերի որոշակիություն, չափելիություն, հասանելիություն, իրագործելիություն; ժամանակի մեջ հստակ կանխորոշվածություն՝ /հավելված՝ Որակի հայեցակարգ.pdf/:

Քոլեջի որակի կառավարման համակարգն իրականացնող ու պատասխանատու գլխավոր կառույցներն են՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, քոլեջի որակի ապահովման կենտրոնը /որակի ապահովման պատասխանատուն/, կարիերայի կենտրոնը, ողջ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը:

Որակի կառավարման համակարգի հիմնական ուղղությունները կիրառվում են քոլեջի կառավարման բոլոր մարմիններում, ինչպես նաև քոլեջի գործունեության բոլոր ուղղություններում:

Կառավարման գործընթացի որակի ապահովման մեխանիզմների ներդրումը հնարավորություն է տալիս կանոնակարգել մասնագիտական կրթական ծրագրերի ու դասավանդման,

ուսումնառության, գնահատման, հետազոտության, սոցիալական համագործակցության որակը: Քոլեջի կառավարման որակի ապահովմանը նպաստում է քոլեջի ռազմավարական ծրագիրը, /հավելված՝ Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf/ ուսանողների, դասախոսների և գործատուների կողմից քոլեջի գնահատումը:
ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	Որակի հայեցակարգ.pdf

Վերլուծել ՄՈՒՀ- ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի ապահովման չափանիշներն են.

- ՄԿԾ-երի բովանդակության և ձևի համապատասխանություն ՄՈՒՀ-ի առաքելությանը, ՈԱՇ-ին, շուկայի պահանջներին, հաստատության հոգևոր և մշակութային կարիքներին;
- Մարդկային, նյութատեխնիկական, մեթոդական ռեսուրսների համապատասխանությունը ՄԿԾ-ի վերջնարդյունքներին;
- Դասավանդման, ուսումնառության և գնահատման համապատասխանություն ուսումնառության արդյունքներին /հավելված՝ Որակի հայեցակարգ.pdf/:

Կրթական ծրագրերի արդյունավետության մասին տեղեկատվության հավաքագրումն ու ամփոփումն իրականացվում է ՄԿԾ-երից շահակիցների բավարարվածության գնահատման նպատակով իրականացվող ուսումնասիրությունների միջոցով:

Պետք է նշել, որ ստացված բոլոր տեղեկատվությունները վերլուծվում են առանձին–առանձին: Գործատուների և դասախոսների շրջանակներում դեռևս հարցումներ չի իրականացվում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	https://www.facebook.com/www.apq.am https://ascol.am/ collegeararat@mail.ru

Վերլուծել ՄՈՒՀ- ի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գործող կրթական ծրագրերի և դրանց համապատասխան շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը տեղակայված է ԱՊՔ-ի պաշտոնական կայքում /https://ascol.am/ և ֆեյսբուքյան էջում /https://www.facebook.com/www.apq.am/:

Բացի այդ, որակավորման և մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությամբ տեղեկության տարածումն իրականացվում է ինչպես դիմորդների, այնպես էլ ԵՊՀ-ի կողմից անցկացվող ամենամյա օլիմպիադաների մասնակիցների շրջանում:

Քոլեջի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների արդյունավետությունը ապացույց է քոլեջի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի օրինաչափ բարձրացումը:

2019-2020 ուստարվա դիմորդների թվաքանակի գերազանցումը նախատեսված պլանից ևս վկայում է տեղեկատվության հասանելիության, մատչելիության և օբյեկտիվության մասին:

Ուժեղ կողմեր	*Թույլ կողմեր*

1. Կառավարման մարմինների կանոնակարգերը և աշխատակարգերը /հիմք՝ առանձին ստորաբաժանումների կանոնակարգեր և ընթացակարգեր/ 2. ԱՊՔ-ի կազմակերպական կառուցվածք /տնօրենի տեղակալներ, տնօրենի օգնական, որակի ապահովման բաժին, կարիերայի կենտրոն, և այլն/ 3. Ներքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներին 4. ԱՊՔ-ի որոշումները կայացվում են վերլուծությունների հիման վրա՝ հաշվի առնելով դասախոսների և ուսանողների կարծիքը 5. Գործողությունների կարճաժամկետ ծրագրի առկայություն /հիմք՝ 2019-2020 զարգացման ծրագիր/ 6. Կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի կանոնարգի և ընթացակարգի առկայություն:	1. Տեղեկատվության հավաքագրման գործիքակազմի պակաս
Հնարավորություններ 1.Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համագործակցություն 2.Արտաքին շահակիցների մասնակցությունը ԱՊՔ-ի կառավարման գործընթացներին և հետադարձ կապի ապահովում	***Ռիսկեր*** 1.Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխություններ 2.Ֆինանսական ռեսուրսների մուտքերի հնարավոր նվազում
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝ • ***նոր ռազմավարական պլան մշակելիս ավելի խորը վերլուծել արտաքին և ներքին գործոնները:***	

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Չափանիշ: ***ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:***

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր: Արարատի պետական քոլեջը, որպես միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն տրամադրող մասնագիտացված քոլեջ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված արհեստագործական, տնտեսագիտական, մանկավարժական, տեղեկատվական տեխնոլոգիաների, սպասարկման ոլորտի մասնագիտությունների գծով առաջարկում է կրթական ծրագրեր (նաև կարճաժամկետ լրացուցիչ), ինչը համահունչ է քոլեջի առաքելությանը և ռազմավարական նպատակներով սահմանված գործունեության հիմնական ուղղություններին: Կրթական ծրագրերը համապատասխանում են ուսումնական գործընթացի մատչելիությանն ու հավասարությանը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին. ուսումը հասանելի է հասարակության բոլոր շերտերի համար: Արարատի պետական քոլեջը նպատակ ունի դառնալ կրթական բարձր չափանիշներ ունեցող կրթօջախ, որը հնարավորություն կտա սովորողներին լիարժեք կերպով օգտագործել իրենց ներուժը մրցակցային աշխատաշուկայում: Այս ամենն իրականացնելու համար քոլեջն առաջնորդվում է մոդուլային ուսումնական ծրագրերով: Տրամադրվում է եռալեզու դիպլոմ:
ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Հիմքեր	Որակի հայեցակարգ.pdf «Ֆինանսներ» մասնագիտության կրթական ծրագրի մասնագիր.pdf «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրի մասնագիր.pdf «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության կրթական ծրագրի մասնագիր.pdf «Ֆինանսներ» մասնագիտության ՊԿՉ.pdf «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ՊԿՉ.pdf «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության ՊԿՉ.pdf

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչների և որակավորումների ազգային շրջանակի հետ: Արարատի պետական քոլեջն իր առջև խնդիր ունի պատրաստել բարձր որակավորման կարողություններով և հմտություններով օժտված ներկա աշխատաշուկային համապատասխան մասնագետներ: Այդ առումով քոլեջն առաջնորդվում է այնպիսի ՄԿԾ-երով, որոնք, ուսումնաարտադրական մոդուլների պայմաններում, միտված են ժամանակակից տնտեսության պահանջարկին համապատասխան մասնագետների պատրաստմանը՝ տալով հիմնավոր ու որակյալ միջին մասնագիտական և արհեստագործական կրթություն: ԱՊՔ-ն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և չափորոշիչներով իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր, և բոլոր կրթական ծրագրերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշմամբ (2016 թվականի հուլիսի 7-ի N 714 – Ն

որոշման հիման վրա հաստատվել է վերախմբագրած տարբերակը) հաստատված ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին և ապահովում են համապատասխան գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը ուսումնառողների կողմից /հավելվածներ՝ «Ֆինանսներ» մասնագիտության ՊԿՉ.pdf, «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության ՊԿՉ.pdf, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ՊԿՉ.pdf/:

Բոլոր կրթական ծրագրերը վերանայվում են ամբիոններում, մեթոդխորհրդում, քննարկվում մանկավարժական խորհրդի նիստերում: ՄԿԾ-երի ստեղծման համար աշխատանքը հանձնարարվում է տվյալ մասնագիտության մոդուլները (առարկաները) դասավանդող մասնագետին: Մշակվում է ծրագրային ինքնավերլուծություն (բացատրագրի հետ միասին պետք է լինեն ուսումնառության արդյունքների կատարման չափանիշները և ծրագրային մանրամասները):

Կրթական ծրագրերի քննարկմանը ուսանողները չեն մասնակցում, իսկ գործատուները մասնակցում են որոշ մասնագիտությունների դեպքում, ինչպես, օրինակ, աշխատանքի վրա հիմնված՝ «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտության: ՈՒնենք նաև գործատու-վարպետներ, ովքեր դասավանդում են իրենց իսկ կողմից կազմված մասնագիտական կրթական մոդուլային ծրագրերով: Չնայած քոլեջ – գործատու ոչ ֆորմալ՝ երես առ երես երկխոսության ձևաչափը գործնականում արդյունավետ է, այնուամենայնիվ, քոլեջի տնօրինությունը, ելնելով ԱՊՔ-ի առանձնահատկություններից, անհրաժեշտություն է տեսնում մշակել և գործարկել հստակ ֆորմալ մեխանիզմներ քոլեջ-գործատու կապի համակարգման, ամրապնդման, շոշափելի արդյունքների և կայուն շարունակականության ապահովման համար: Մոդուլային կրթական ծրագրերով քոլեջում ուսումնառությունն իրականացվում է 2011 թվականից, որոնք համապատասխան են պետական կրթական չափորոշիչներին: Հատկանշական է, որ չափորոշիչների մշակմամբ ԱՊՔ-ն նպատակ է հետապնդել հստակեցնելու կրթական ծրագրերից դեպի աշխատաշուկա ելքերի ապահովումը, որի համատեքստում մատնանշվել են շրջանավարտների կարողությունների, կրթական ծրագրի վերջնարդյունքների շրջանակը, շրջանավարտների գործունեության բնագավառները: Բոլոր կրթական ծրագրերն ունեն առարկայական նկարագիր, որը ներառում է առարկայի նպատակը, խնդիրները, դասընթացի ուսուցման նախապայմանները, վերջնարդյունքը, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, օրացուցային թեմատիկ պլանը /տես ծրագիրը/:

ԱՊՔ-ում զգալի աշխատանքներ են տարվում հաստատության առաքելության հետ ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչության, պետական կրթական չափորոշիչների, ՈԱՇ-ի, շուկայի պահանջների, հաստատության հոգևոր և մշակութային կարիքների հետ համադրելիության ուղղություններով՝ կարևորելով «լավ» մասնագետ պատրաստելու նախապայմանը /Որակիհայեցակարգ.pdf,7-րդ կետ/:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):

Քոլեջում մշակված չէ օտարերկրյա առաջավոր ուսումնական հաստատությունների հետ բենչմարքեթինգի իրականացման քաղաքականություն, սակայն, 2018-2019 ուսումնական տարում Իտալիայում կայացած վերապատրաստումից հետո՝ ԱՊՔ-ի տնօրենը, Վրաստանի քոլեջներից մեկի գործուղումից հետո՝ քոլեջի կարիերայի կենտրոնի ներկայացուցիչը, վերլուծություններ /2020-2021 տարեկան զարգացման ծրագիր/ ու քննարկումներ են կատարել՝ մանկավարժական կոլեկտիվին ավելի մոտիկից ծանոթացնելով այդ քոլեջների գործունեությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հիմքեր	ԱՊՔ-ում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգ.pdf Պետական ատեստավորող հանձնաժողովների կարծիքները վերջին 3 տարիների

	համար.pdf/ Որակի հայեցակարգ.pdf /գնահատման գործիքներ/

«Ֆինանսներ» մասնագիտության

№	Ուսումնառության արդյունքները	Դասավանդման մեթոդները	Ուսումնառության մեթոդները
1.	Բանկային համակարգում կատարում է բանկային և արժեթղթային գործառնություններ:	Դասախոսություն, հարց ու պատասխան:	Տեսության կիրառումը գործնականում:
2.	Աշխատում է excel ԿԾՓ-ի միջավայրում:	Դասախոսություն, իրավիճակային խնդիր:	Փորձի ամրապնդում:
3.	Տիրապետում է պետական բյուջետային համակարգին, եկամուտների ու ծախսերի կազմին ու կառուցվածքին, արտաբյուջետային հիմնադրամների եկամուտների աղբյուրներին, ծախսերի ուղղություններին, պետական առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական միջոցներին:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Գիտելիքի մեկնաբանում:
4.	Տիրապետում է ֆինանսական շուկային, դրա հատվածներին և գործառնություններին, բնութագրիչներին, գործիքներին, արժեթղթերի շուկաներին:	Դասախոսություն, խնդրահարույց ուսուցում, հարց ու պատասխան:	Գիտելիքի մեկնաբանում:
5.	Տիրապետում է փողի, դրամաշրջանառության, կանխիկ և անկանխիկ հաշվարկներին, ՀՀ դրամական համակարգին:	Դասախոսություն, հարց ու պատասխան:	Գիտելիքի մեկնաբանում:
6.	Տիրապետում է բանկային և դրամական համակարգի գործունեությանը:	Դասախոսություն, իրավիճակային ուսումնասիրություններ և վերլուծություններ, հարց ու պատասխան:	Գիտելիքի մեկնաբանում:
7.	Կատարում է ֆինանսական վերլուծություններ, մաթեմատիկական հաշվարկներ:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում: Գրաֆիկական վերլուծություններ:
8.	Լուծում է կապիտալի դիսկոնտավորման, կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի մարման, ֆինանսական հոսքերի վերաբերյալ խնդիրներ:	Դասախոսություն, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
9.	Հաշվարկում է տոկոսադրույքներ:	Դասախոսություն, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
10.	Վերլուծում և գնահատում է ներդրումային և լիզինգային նախագծեր:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Գիտելիքի մեկնաբանում:

11.	Կատարում է տարբեր մեծությունների միջին արժեքների հաշվարկներ:	Դասախոսություն, հարց ու պատասխան:	Փորձի ամրապնդում:
12.	Կիրառում է ֆինանսական ոլորտի գիտելիքները, աշխատում բազմամասնագիտական թիմում, իրականացնում բանակցային հմտություններ՝ պահպանելով մասնագիտական էթիկայի սկզբունքները:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Գիտելիքի մեկնաբանում:

«Սպասարկման կազմակերպում» մասնագիտության

№	Ուսումնառության արդյունքները	Դասավանդման մեթոդները	Ուսումնառության մեթոդները
1.	Կազմակերպում է կազմակերպության սպասարկման բաժնում և այլ համապատասխան ստորաբաժանումներում ծառայություններ մատուցող աշխատակազմի աշխատանքային գրաֆիկը:	Ցուցադրում, քննարկում, գործարար խաղերի կազմակերպում:	Տեսության կիրառումը գործնականում:
2.	Մշակում է սպասարկման ձևերի և մեթոդների կատարելագործմանն ուղղված ռազմավարություն:	Դասախոսություն, դեպքերի քննարկում:	Գիտելիքի մեկնաբանում:
3.	Կատարում է պատվերների ամրագրում:	Ցուցադրում, քննարկում, խաղերի կազմակերպում:	Փորձի ամրապնդում:
4.	Դիմավորում և ողջունում է հաճախորդներին, նրանց տալիս համապատասխան խորհրդատվություն, ստեղծում հաճախորդների տվյալների բազա, պահպանում և ընդլայնում այն:	Դասախոսություն, հարց ու պատասխան, ցուցադրում:	Տեսության կիրառումը գործնականում:
5.	Կազմակերպում է հաճախորդների հատուկ ծառայություններից օգտվելը, իրավասությունների շրջանակում լուծում հաճախորդների մոտ առաջացող խնդիրները:	Դասախոսություն, ներկայացումներ, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
6.	Մշակում է ստորաբաժանման աշխատանքային պլան, մասնակցում ստորաբաժանման աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունների մշակման աշխատանքներին:	Ցուցադրում, իրավիճակային խմբային քննարկումներ, խաղերի կազմակերպում:	Տեսության կիրառումը գործնականում:
7.	Օժանդակում է կադրերի բաժնին նոր աշխատակից ընտրելիս և նոր ընդունված աշխատակիցներին ծանոթացնում է աշխատանքային պայմաններին ու կանոնակարգին:	Դասախոսություն, ներկայացումներ, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
8.	Կատարում է աշխատանքի բաշխում և վերահսկում ստորաբաժանման աշխատակազմի աշխատանքային գործընթացը՝ ապահովելով դրա բնականոն ընթացքը:	Ցուցադրում, քննարկում, խաղերի կազմակերպում:	Տեսության կիրառումը գործնականում:

9.	Վերահսկում է աշխատատեղերում սանիտարահիգիենիկ նորմերի, անվտանգության կանոնների պահպանումը, անհրաժեշտության դեպքում ցուցաբերում առաջին բուժօգնություն:	Դասախոսություն, ներկայացումներ, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
10.	Գնահատում է ստորաբաժանման ռեսուրսները և կատարում դրանց բաշխում:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Փորձի ամրապնդում:
11.	Հաստատում է կապեր համապատասխան ծառայություններ մատուցող, մատակարարող, սպասարկող և պատվիրատու կազմակերպությունների հետ, վարում բանակցություններ:	Ցուցադրում, քննարկում, խաղերի կազմակերպում:	Տեսության կիրառումը գործնականում:
12.	Կազմում է իր ստորաբաժանման բյուջեն, վերահսկում բյուջեի և վճարումների արձանագրությունները, հաստատում ֆինանսական գործարքներ:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, ամրապնդող զրույցներ, իրավիճակային խմբային քննարկումներ:	Տեսության կիրառումը գործնականում:
13.	Կազմում է պահանջագրեր և հաշվետվություններ անհրաժեշտ, ընդունված, օգտագործված, մնացորդ և վնասված ռեսուրսների վերաբերյալ:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Փորձի ամրապնդում:

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության

№	Ուսումնառության արդյունքները	Դասավանդման մեթոդները	Ուսումնառության մեթոդները
1.	Բնութագրում է հաշվապահական հաշվառման խնդիրներն ու նպատակը:	Դասախոսություն, «Մտքերի տարափ», «Պրիզմա», «ՓԳՆՀ»	Գիտելիքի հստակեցում և ընդլայնում:
2.	Բնորոշում է հաշվապահական հաշվառման տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգը:	Դասախոսություն, հարց ու պատասխան, ցուցադրում:	Գիտելիքի մեկնաբանում:
3.	Բնորոշում է հաշվապահական հաշվառման ներքին և արտաքին օգտագործողներին:	Դասախոսություն, «Ապագայի անիվ»	Գիտելիքի մեկնաբանում:
4.	Ներկայացնում է հաշվապահական հաշվառման կարգավորումը, ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Գիտելիքի վերարտադրում:

5.	Բնութագրում է աուդիտորական գործունեությունը և աուդիտը:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Գիտելիքի մեկնաբանում:
6.	Տարբերակում է ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառման խնդիրներն ու նպատակները:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
7.	Բնութագրում է կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու կապիտալը:	Դասախոսություն, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
8.	Հաշվարկում է աշխատավարձ, արձակուրդային, վերջնահաշվարկ, անաշխատունակության թերթիկով վճարում:	Դասախոսություն, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
9.	Որոշում է հարկվող շահույթը, կիրառում նվազեցումներն ու դրույքաչափերը:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
10.	Սինթետիկ հաշիվների տեղեկագրերի հիման վրա կազմում է հաշվապահական հաշվեկշիռ և ֆիանսական արդյունքների մասին հաշվետվություն:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Տեսության կիրառումը գործնականում:
11.	Նկարագրում է եկամուտների և ծախսերի հետ կապված հիմնական տնտեսական գործառնությունները և դրանց փաստաթղթավորումը:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր	Տեսության կիրառումը գործնականում:
12.	Բնորոշում է ֆինանսական շուկայի կառուցվածքը:	Դասախոսություն, հարց ու պատասխան :	Գիտելիքի վերարտադրում:
13.	Ներկայացնում է բյուջեի կազմման հիմնական սկզբունքները:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, իրավիճակային խնդիր:	Գիտելիքի վերարտադրում:
14.	Ներկայացնում է մրցակցային շուկաները՝ կատարյալ և ոչ կատարյալ մրցակցությունը:	Դասախոսություն, դեպքերի քննարկում, «Մտքերի	Գիտելիքի հստակեցում և ընդլայնում:

		տարափ», «Ապագայի անիվ», «Քառաբաժան աղյուսակ», «Երիցուկ»:	
15.	Բնութագրում է ՀՀ–ում գործող ֆինանսավարկային համակարգը:	Դասախոսություն, «Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր», «Ապագայի անիվ»	Գիտելիքի հստակեցում և ընդլայնում:

ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈՒԱ) համապատասխանությունը (անհրաժեշտության դեպքում ավելացնել տողերը և սյուները)

«Ֆիանանսներ» մասնագիտություն

№	Դասընթացի /մոդուլի/ անվանում	ՈՒԱ 1	ՈՒԱ 2	ՈՒԱ 3	ՈՒԱ 4	ՈՒԱ 5	ՈՒԱ 6	ՈՒԱ 7	ՈՒԱ 8	ՈՒԱ 9	ՈՒԱ 10
1.	Բանկային գործի հիմունքներ	*					*				
2.	Զեռներեցություն							*			
3.	Տնտեսագիտության տեսության հիմունքներ			*		*	*				
4.	Ֆինանսների հիմունքներ			*							
5.	Մաթեմատիկական հաշվարկման հիմունքներ	*						*			
6.	Ֆինանսային մաթեմատիկա							*	*	*	
7.	Ֆիանսական հաշվարկներ excelԿԾՓ –ի միջավայրում		*						*		
8.	Մասնագիտական անգլերեն				*	*	*				
9.	Պետական ֆինանսներ			*							
10.	Ֆինանսական շուկաներ	*			*		*				
11.	Ֆինանսական իրավունք				*						
12.	Համայնքային ֆինանսներ			*							

13.	Սոցիալական ապահովագրություն և ապահովություն			*							
14.	Կազմակերպության ֆինանսներ			*				*			
15.	Ընդհանուր վիճակագրության հիմունքներ							*			
16.	Բյուջետային համակարգ			*							
17.	Դրամական համակարգ	*				*	*				

«Սպասարկման կազմակերպում» մասնագիտություն

№	Դասընթացի /մոդուլի/ անվանում	ՌԱ 1	ՌԱ 2	ՌԱ 3	ՌԱ 4	ՌԱ 5	ՌԱ 6	ՈՒԱ 7	ՌԱ 8	ՈՒԱ 9	ՈՒԱ 10
1.	Կառավարման ընդհանուր կարողություններ		*						*		
2.	Աշխատակազմի կառավարում	*					*	*			*
3.	Ղեկավարման հմտություն, հոգեբանություն և սպասարկման էթիկետ		*								
4.	Գործարար հաղորդակցման հմտություններ		*								
5.	Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարումը սպասարկման կազմակերպություններում					*					
6.	Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով			*	*						
7.	Ծառայությունների կազմակերպման հիմքերը և իրավական կարգավորումը									*	

8.	Անձնական խնամքի, հիգիենայի և բուժական սպասարկման ծառայությունների կազմակերպում			*		*			*	*	
9.	Հանգստի և ժամանցի սպասարկման ծառայությունների կազմակերպում	*		*					*	*	
10.	Սպորտի և մարզական ապասարկման ծառայությունների կազմակերպում		*	*					*	*	*
11.	Սոցիալ-կենցաղային ապասարկման ծառայությունների կազմակերպում	*	*						*	*	*
12.	Արդյունաբերական համակարգի ապասարկման ծառայությունների կազմակերպում	*	*	*					*	*	
13.	Միջոցառումների սպասարկման ծառայությունների կազմակերպում	*	*	*		*	*		*	*	*

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտություն

№	Դասընթացի /մոդուլի/ անվանում	ՌԱ 1	ՌԱ 2	ՌԱ 3	ՌԱ 4	ՌԱ 5	ՌԱ 6	ՌԻԱ 7	ՌԱ 8	ՌԻԱ 9	ՌԻԱ 10
1.	Հաշվապահական հաշվառման տեսություն	*	*	*	*	*	*	*			
2.	Հաշվապահական հաշվառման կազմման և վարման ընթացակարգեր							*			*
3.	Փաստաթղթավորում և հաշվապահական հաշվառման վարում							*			*
4.	Հարկային									*	

	օրենսդրության կիրառումը հաշվապահական հաշվառման գործում										
5.	Հիմնական միջոցների հաշվառում							*			
6.	Ոչ նյութական ակտիվների հաշվառում							*			
7.	Պաշարների հաշվառում							*			
8.	Դրամական միջոցների հաշվառում							*			
9.	Դեբիտորների և կրեդիտորների հաշվառում							*			
10.	Սեփական կապիտալ: Եկամուտների և ծախսերի հաշվառում							*	*		*
11.	Կառավարչական հաշվառում						*				
12.	Ձեռներեցություն							*			

Վերլուծել ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱՊՔ-ում, մոդուլային կրթական գործընթացի կազմակերպմանը, կրթական ծրագրերի բարեփոխումներին, ուսումնական պլանների և դասընթացների առարկայական ծրագրերի վերանայմանը զուգահեռ, առաջադրվեցին դասավանդման և ուսումնառության ավանդական փորձը վերանայելու և նորարարական մոտեցումներ ներդնելու պահանջներ, որոնցից առանցքայինը ուսանողակենտրոն մոտեցումն է: Կրթական բոլոր ծրագրերում ներառված են ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդներ, որոնց կիրառումը քննարկվում է ամբիոններում, մեթոդխորհրդում /տես՝ տարբեր զեկույցների, մեթոդական մշակումների ներկայացումները նիստերում/: Գործնական աշխատանքներին ավելի մեծ ժամաքանակ հատկացնելով՝ ուսանողների մոտ ձևավորվում և ավելի են ամրապնդվում հմտություններն ու կարողությունները: Ուսանողներն ավելի հետաքրքրված և ակտիվ մասնակցություն են ցուցաբերում դասապրոցեսին՝ հատկապես գործնական պարապմունքներին: Կրթության որակի էական բարելավման նպատակով գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ կիրառվում են թեստային աշխատանքներ, գործարար խաղեր, հետազոտություններ, իրավիճակային վերլուծություններ, բանավեճեր, որոնք նպատակ ունեն ամրապնդելու տեսական գիտելիքները, ինչը զարգացնում է նաև ուսանողների գործնական կարողությունները: Մասնագիտական տեսական գիտելիքներն ամրապնդելու համար ուսանողներին հանձնարարվում են ինքնուրույն աշխատանքներ /մշակումներ, ռեֆերատներ, հետազոտություններ/, իսկ գործնական կարողությունների ձեռքբերման համար՝ գործարար խաղեր, շնորհանդեսներ, խմբային և անհատական աշխատանքներ, պրակտիկաների կազմակերպում: Անշուշտ, կրթական ծառայությունը բնորոշվում է արդյունավետության հետաձգմամբ և շրջանավարտի ապագա աշխատանքի ու կյանքի պայմանների

արդյունքներից կախվածությամբ: Ավարտելով ուսումնառության գործընթացը՝ մասնագետը թողնում է կրթական ծառայությունների դաշտը և մտնում կրթական շուկայի հարաբերությունների ոլորտ՝ որպես որակյալ աշխատուժի սեփականատեր: Եվ միայն աշխատանքի երկարատև ժամանակահատվածում մասնագետը, կրթական հաստատությունը և հասարակությունն ամբողջությամբ կարող են գնահատել ստացած կրթական ծառայության որակը, թեպետ դասախոսների աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է նաև քննությունների ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների տվյալներով /հավելված՝ Պետական ատեստավորող հանձնաժողովների կարծիքները վերջին 3 տարիների համար.pdf/: ԱՊՔ-ի տնտեսագիտական բաժնի ուսանողները մասնագիտական հաղթանակներ ու պատվոգրեր ունեն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից անցկացված “Brain ring” տնտեսագիտական մրցույթից /28.04.2016/, Ֆինանսների հաշտարարի գրասենյակի կողմից անցկացված հեռավար մրցույթից /17.06.2020թ./: Խաղ-մրցույթներ են անցկացվում նաև հենց դասերի ընթացքում, թեմաները վերցվում են ուսումնական ծրագրի մոդուլներից: Գործնական և սեմինար աշխատանքները մեծացնում են ուսանողների մասնակցությունը ուսումնական պրոցեսին, որը մեծ խթան է հանդիսանում նրանց մոտ մոտիվացիայի ավելացմանը /հավելված՝ արձանագրություններ, ներքին կարգապահական կանոններ/: Բարձր առաջադիմություն, փորձարարական-նախագծային աշխատանքներում գործուն և արդյունավետ աշխատանք ցուցաբերած ուսանողների համար տնօրինական խորհրդի կողմից կարող են սահմանվել խրախուսման նյութական ու այլ ձևեր /հավելված՝ ԱՊՔ-ի կանոնադրություն.pdf/:

Դասավանդման արդյունավետ մեթոդների ընտրության հարցում նշանակալից դեր են կատարում նաև ուսանողների շրջանում իրականացվող հարցումները /հիմք՝ Կրթության ներքին որակի ապահովման պատասխանատուի կողմից անցկացվող հարցումներ, /հավելված՝Հարցաթերթիկի օրինակ.pdf/: Դասավանդման որակի բարելավման խնդիրն անընդհատ գտնվում է ԱՊՔ-ի տնօրինության և որակի ենթակառուցվածքի պատասխանատուի ուշադրության կենտրոնում, և այս ուղղությամբ տարեցտարի արձանագրվում է որոշակի առաջընթաց:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Հիմքեր	ԱՊՔ-ում ուսանողների գիտելիքների, կարողությունների ընթացիկ գնահատման, գնահատման արդյունքների բողոքարկման, մատենավարման և հաճախումների ընթացակարգ.pdf Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականություն.pdf Կարողություններին միտված պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման ուղեցույց /Ա.Սահրադյան 2015թ/

Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-երի համար ներկայացնել ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները:

№	Ուսումնառության արդյունք	Գնահատման մեթոդ
1.	ՈՒնենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական և գործնական կարողություններ:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում /քննություն՝ բանավոր հարցում/, պետական ամփոփիչ ատեստավորում

2.	Դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում /բանավոր հարցում/, իրավիճակային խնդրի լուծում
3.	ՈՒնենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում /բանավոր հարցում/, իրավիճակային խնդրի լուծում
4.	Դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում /բանավոր հարցում/, իրավիճակային խնդրի լուծում
5.	ՈՒնենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ:	պրակտիկա
6.	Ցուցաբերի իր և աշխատակիցների /առկայության դեպքում/ մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում /բանավոր հարցում/, իրավիճակային խնդրի լուծում
7.	ՈՒնենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում /բանավոր հարցում/, իրավիճակային խնդրի լուծում
8.	Ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում, /բանավոր հարցում/, ռեֆերատ
9.	ՈՒնենա աշխատակիցների /առկայության դեպքում/ աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները /լիազորության դեպքում/ ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու կարողություններ:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում /բանավոր հարցում/
10.	Ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարբեր կիրառելու կարողություններ:	պրակտիկա, մասնագիտական գիտելիքների ստուգում /քննություն՝ բանավոր հարցում/, պետական ամփոփիչ ատեստավորում

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջում որոշակի փոփոխություններ են կատարվել գնահատման սկզբունքներում և ուսանողի վերջնական գնահատականի ձևավորման գործում /հավելված՝ ԱՊՔ-ում ուսանողների գիտելիքների, կարողությունների ընթացիկ գնահատման, գնահատման արդյունքների բողոքարկման, մատենավարման և հաճախումների ընթացակարգ.pdf/: 2015-2016 ուսումնական տարվանից ԱՊՔ-ն անցել է 10 միավորանոց գնահատման համակարգի, անցողիկը՝ 4 միավոր: ԱՊՔ-ում կիրառվում է գիտելիքի գնահատման բազմագործոն համակարգ՝ կարևորելով ուսանողի հմտություններն ու կարողությունները, ապահովելով ակադեմիական թափանցիկություն /Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականություն.pdf/: Ուսումնառության գործընթացի արդյունքը և ստացած գիտելիքների պաշարը գնահատվում է՝ հաշվի առնելով այնպիսի բաղադրիչներ (գործոններ), ինչպիսիք են ուսանողի հաճախումները, լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքներին մասնակցությունը և այլն: Ուսանողի արդյունարար գնահատականը ձևավորվում է մոդուլների յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովման դեպքում: Դասախոսն ընթացիկ գնահատում և արձանագրում է ուսանողի կողմից ուսումնառության արդյունքներն ապահովելու հիմքերը՝ գնահատման թերթ, մոդուլի յուրացման գնահատման ամփոփ թերթ: Ուսանողների գիտելիքի ստուգման ձևերի ընտրության հարցում ամբիոններին տրված է ակադեմիական ազատություն՝գործնական կամ բանավոր հարցում: Մոդուլների վերջնական արդյունքի հանձնմանը պարտադիր ներկա են լինում ուսումնական գծով փոխտնօրենը, բաժնի վարիչները կամ որակի ապահովման ենթակառուցվածքի պատասխանատուն: Տարբերակված ստուգարքների, մոդուլների, քննությունների ամփոփումներին ներկայանալ թույլատրվում է այն ուսանողներին, ովքեր ամբողջովին կատարել են տեսական, գործնական, լաբորատոր պահանջները և նրանց բացակայությունների ընդհանուր թիվը կիսամյակի ընթացքում չի գերազանցել 120 ժամը: Գիտելիքների, կարողությունների ստուգումը կազմակերպվում է գործող ուսումնական պլանների /բոլոր մասնագիտությունների համար/ ժամանակացուցի համաձայն: Եթե առարկան/մոդուլը ստուգարքային կամ քննական է, ապա, անկախ կիսամյակի ընթացքում տվյալ առարկայից/մոդուլից ունեցած գնահատականից, տվյալ կիսամյակի համար որոշիչ է համարվում առարկայի կամ մոդուլի քննական կամ ստուգարքային գնահատականը: Ներկայումս կրթական ծրագրերում առկա են մոդուլների ուսումնառության արդյունքների հանձնման, ստուգարքով կամ քննությամբ ավարտվող, սակայն անհատական աշխատանք կամ ռեֆերատ պարունակող և չպարունակող մոդուլներ: Այս փոփոխությունն իրականացվել է գնահատման հիմքում ուսանողակենտրոն մոտեցման և գնահատման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր	Դասախոսական կազմի դինամիկան.xlsx «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագիր.pdf

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:

Ուսանողների ներհոսք

№	Երկիր, հաստատություն	2012/ 2013	2013 / 2014	2014/ 2015	2015/2016	2017/2018
1.						
2.						

Ուսանողների արտահոսք

№	Երկիր, հաստատություն	2012/ 2013	2013 / 2014	2014/ 2015	2015/2016	2017/2018
1.						
2.						

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր:

Դասավանդողների ներհոսք

№	Երկիր, հաստատություն	2012 / 2013	2013 / 2014	2014 / 2015	2015 / 2016	2017 / 2018
1.						
2.						

Դասավանդողների արտահոսք

№	Երկիր, հաստատություն	2012 / 2013	2013 / 2014	2014 / 2015	2015 / 2016	2017 / 2018
1.						
2.						

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

Քոլեջում գործող մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են պետական կրթական չափորոշիչներին: Առարկայական ծրագրերը կազմվում են ուսումնական պլաններին համապատասխան: Դրանք պարտադիր քննարկվում են համապատասխան ամբիոններում, որտեղ մասնագետ – դասախոսների կարծիքներն անպայմանորեն հաշվի են առնվում: Ծրագրերը քննարկվում են մեթոդական խորհրդի, մանկավարժական խորհրդի նիստերում, հաշվի են առնվում նաև արտաքին շահակիցների՝ գործատուների կարծիքները՝ որոշ մասնագիտությունների գծով:

ՄԿԾ-երի բովանդակային հուսալիությունն ապահովելու համար, ըստ Որակիհայեցակարգ.pdf-ի, կատարվում են հարցումներ ուսանողների շրջանում, սակայն շրջանավարտների, գործատուների շրջանակներում՝ ոչ: ԱՊՔ-ի կրթական ծրագրերը նույնական են ՀՀ-ի այլ քոլեջների ծրագրերին, քանի որ ամբողջությամբ մշակված են պետական չափորոշիչների հիման վրա, ինչը կարող է նպաստել քոլեջների միջև ներգնա շարժունությանը: Սակայն քոլեջում ներգնա շարժունության դեպքեր չեն եղել: ՄՈՒՀ-ն այսօրվա դրությամբ չունի այնպիսի հնարավորություններ, որպեսզի ապահովի ուսանողների և դասավանդողների շարժունություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր	ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԻ ԿԱՆԱՆԱԿԱՐԳ.pdf /2.1կետ/ Որակի հայեցակարգ.pdf /9-րդ կետ/

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

Անշուշտ, ՄԿԾ–երը ենթարկվում են մշտադիտարկման /ամբիոններ, ուսումնական մաս, մեթոդական խորհուրդ, որակի ապահովման ենթակառուցվածք/: Յուրաքանչյուր տարի բոլոր մասնագիտացումների գծով կրթական ծրագրերը վերանայվում և ներկայացվում են ԱՊՔ-ի մանկավարժական խորհրդի, մեթոդական խորհրդի, ամբիոնների քննարկմանն ու հաստատմանը: Պարբերաբար վերանայման գլխավոր նպատակը կրթական ծրագրերի արդյունավետության և որակի ապահովումն է: Ըստ ԱՊՔ-ի որակի ապահովման ենթակառույցի կողմից մշակված որակի ապահովման հայեցակարգի՝ դրա իրականացման առաջնահերթ ոլորտներից մեկը մասնագիտական կրթական ծրագրերն են /հավելված՝ Որակի հայեցակարգ.pdf-ի 9-րդ կետ/: Որակի ապահովման ոլորտ՝ մասնագիտական կրթական ծրագիր, ռազմավարական ծրագրի առաջնահերթությունն է՝ մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) մշակումը, իրականացումը և մշտադիտարկումը: ՄԿԾ-երի մշտադիտարկում իրականացնելու համար մշակվել են նաև նոր մեխանիզմներ՝ ընթացակարգեր և որակի գնահատման գործիքներ: ԱՊՔ-ում որակի ապահովման ենթակառույցի կողմից դեռևս մշակվող վերանայման գործընթացները պետք է նպաստեն և խրախուսեն բոլոր աստիճաններում կրթական ծրագրերի արդյունավետության և որակի բարձրացմանը, ապահովեն դրանց համապատասխանությունը քոլեջին, տվյալ կրթական ծրագրի առաքելությանը, շուկայի պահանջներին:

Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

Վերջին 5 տարիների ընթացքում ուսումնասիրվել և վերանայվել են մասնագիտական կրթական բոլոր ծրագրերը: Դրանք համապատասխան են ԱՊՔ-ի ռազմավարական ծրագրի պահանջներին և առաքելությանը: Դասալսումների, պրակտիկաների, հարցումների հիման վրա կատարված վերլուծությունները տալիս են հնարավորություն՝ հասնելու վերջնական գնահատականի: ՄԿԾ–երը ենթարկվում են մշտադիտարկման: Յուրաքանչյուր ամբիոն ուսումնասիրում է համապատասխան ծրագիրը, որից հետո անհրաժեշտության դեպքում փնտրում բարելավման ուղիներ: Քոլեջում մշակվել և ներդրվել է մեթոդխորհրդի ընթացակարգ, որը ենթադրում է կրթական ծրագրերի սիստեմատիկ ուսումնասիրություն, և նպաստում է դրանց բարելավմանը:

Պահուստային ժամերի տնօրինումն իրականացվում է նպատակային. Դրանք տրամադրվում են մասնագիտական դասընթացներին: 2018 թվականի մայիսին, մեթոդխորհրդի արտահերթ նիստում, ինչպես նաև մանկավարժական խորհրդի նիստում «Ձեռներեցություն» մոդուլը քննարկվեց և ընդգրկվեց նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական համակարգում առկա բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում, որի նպատակն էր ուսանողների մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ և կարողություններ:

Ըստ ծրագրերի՝ վերանայվել են նաև մասնագիտական պրակտիկաների կազմակերպման համակարգը: Մանկավարժական խորհրդի, մեթոդական խորհրդի և ամբիոնների նիստերի ժամանակ կատարված հարցումների միջոցով վեր են հանվում խնդիրները, հնարավորինս տրվում լուծումներ: Պարբերաբար անցկացվող քննարկումների, դիտարկումների աղյունքում նոր առարկաներ կարող են ավելացվել կամ հանվել կրթական ծրագրերից, կամ, օրենսդրական որոշ կետեր չխախտելով, փոփոխություններ կատարել ծրագրերում: Հարցումների հիման վրա առավելագույնս հստակեցվել են ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրությունը, թե որքանով են դրանք նպաստում գիտելիքի, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, կրթական ծրագիրն ավարտելիս վերջնարդյունքների /մոդուլների ուսումնառության արդյունքների հանձնման/ ուսումնասիրության հիման վրա երևում է ծրագրի իրականացման արդյունավետությունը:

Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:	
Ուժեղ կողմեր 1.Համապատասխանությունը ԱՊՔ-ի ռազմավարական ծրագրին, պետական կրթական չափորոշիչներին, որոնք անընդհատ վերանայվում են ամբիոններում /հիմք՝ արձանագրություններ/ 2.ՄԿԾ-ների համադրելիությունը որակավորումների ազգային շրջանակի հետ 3.ԱՊՔ-ն ունի կարճաժամկետ /լրացուցիչ/ կրթական ծրագրերի մշակման և իրականացման բավարար փորձ 4.ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայություն 5.Կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգի առկայություն և արդյունավետ կիրառում /հիմք՝ մեթոդխորհրդի ընթացակարգ/ 6.Գիտելիքի գնահատման բազմագործոն համակարգ՝ կարևորելով ուսանողի հմտություններն ու կարողությունները, ապահովելով ակադեմիական թափանցիկություն 7.Միջազգային ծրագրերում ԱՊՔ-ի մասնակցության աստիճանի ակտիվացումը 8.ՀՀ մասնավոր հատվածների փոքր գործատուները ներգրավված են արհեստագործական կրթական համակարգի ՄԿԾ-ի քննարկմանը	***Թույլ կողմեր*** 1.Նեղ մասնագիտական վերապատրաստումների հնարավորություն 2.Քոլեջում մշակված չէ բենչմարքինգի իրականացման քաղաքականություն, սակայն կատարվել է համեմատական վերլուծություն 3.Փորձի փոխանակման նպատակով ուսանողների և դասավանդողների շարժունության բացակայություն 4.Առանձին դասախոսների կողմից գնահատման համակարգում ուսանողների հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդների անկատարություն
Հնարավորություններ 1.Վստահություն միջին մասնագիտական և արհեստագործական կրթությամբ աշխատանք գտնելու վերաբերյալ 2.Արտաքին շահակիցների ներգրավումը ՄԿԾ-երի կազմման և վերանայման գործընթացին 3.Նոր մշակվող ընթացակարգեր, որոնք կանոնակարգում են ՄԿԾ-երի արդյունավետ գործընթացը	***Վտանգներ*** 1.Աշխատաշուկայի պահանջների անընդհատ փոփոխություն 2.Աշխատաշուկայում պահանջարկի փոփոխություններով պայմանավորված՝ ՄԿԾ-ների վերանայման արտաքին շահակիցների թույլ արձագանքը

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝

- ***մեթոդխորհրդի գործառույթների արդիականացման քաղաքականության մշակում,***
- ***ֆինանսական միջոցների նախատեսում՝ նեղ մասնագիտական վերապատրաստումների համար,***
- ***մասնագիտությունների թիմայի մշտադիտարկում***

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:***

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Քոլեջն իր գործունեության ընթացքում պատրաստում է հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ: Քոլեջի՝ մասնագետների պատրաստմանն ուղղված գործունեությունը նպաստում է ուսանողների անձի ստեղծագործական, հոգևոր և ֆիզիկական հնարավորությունների զարգացմանը, բարոյականության, առողջ կենսակերպի ամուր հիմքերի ձևավորմանը, հանրապետության հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակից լինելու պահանջմունքի ձևավորմանը:

Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ քոլեջն իր ռազմավարությամբ միտված է դառնալու ուսանողակենտրոն միջավայր, որակյալ կրթական ծառայությունների մատուցման համար ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան ուսանողին առավելագույնս իրագործելու իր ուսումնառության նպատակը՝ ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, բավարարել ուսանողների ներկա և հեռանկարային պահանջմունքները: Քոլեջը կրթության որակի ապահովման հարցում վարում է հստակ քաղաքականություն և նրա կրթական գործունեության գերակա նպատակը կրթական ծառայությունների որակից ուսանողների բավարարվածությունն է:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր	Ընդունելության կանոնակարգ ԱՊՔ.pdf dimord.emis.am

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:						
Ուսանողների թիվը		*2015 / 2016*	*2016 / 2017*	*2017/ 2018*	*2018 / 2019*	*2019 / 2020*
Մասնագետի	առկա հեռակա	316	357	392	407	406

Ուսումնառողներիշարժունությունը

Ուսումնառողներիշարժը վերջին 5 տարվա կտրվածքով:

Ուսանողների արտահոսք

	Հաստատություն/երկիր	*2015 / 2016*	*2016 / 2017*	*2017 / 2018*	*2018 / 2019*	*2019 / 2020*
1.	«Արարատի բժշկական քոլեջ»/ՀՀ	-	-	-	1	-
2.	Արարատի ավագ դպրոց / ՀՀ	-	-	-	2	-
3.	Արարատ գյուղի դպրոց / ՀՀ	-	-	1	-	-

Ուսանողների ներհոսք						
	Հաստատություն/երկիր	*2015 / 2016*	*2016 / 2017*	*2017 / 2018*	*2018 / 2019*	*2019 / 2020*
1.						
2.						

Հեռացումներ և վերականգնումներ						
	Ուսանողների թիվ	*2015 / 2016*	*2016 / 2017*	*2017 / 2018*	*2018 / 2019*	*2019 / 2020*
1.	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/թիվը	37/11,7	49/13,72	31/7,90	35/8,55	19/4,67
2.	Վերականգնվածուսանողներիտոկոսը/թիվը	3/0,949	1/0,28	4/1,02	6/1,47	10/2,46

Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական կրթություն ունեցող անձանց դիմումներով համաձայն «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ընդունելության կանոնակարգի: Ընդունելություն իրականացվում է առանց ընդունելության քննությունների մրցութային հիմունքներով, բացառությամբ՝ «Դեղագործություն» մասնագիտության միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների:

Քոլեջն ընդունելությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված՝ արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցմամբ անվճար և վճարովի տեղերին համապատասխան: Լիազորված մարմնի կողմից առկա ուսուցման տեղերը հատկացվելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում տնօրենը հրապարակում է ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարություն: Առկա ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի փաստաթղթերը սովորաբար ընդունվում են ընդունելության հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 25-ը: Ընդունելության մրցույթի արդյունքներն հրապարակվում են քոլեջի տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:

2020-2021 ուսումնական տարում արտակարգ դրությամբ պայմանավորված Արարատի պետական քոլեջի դիմում-հայտերն ընդունվում են առցանց՝ հուլիսի 20-ից: Հայտերն ընդունվում են dimord.emis.am կայքի միջոցով, որտեղ հայտերի լրացման հրահանգները ներկայացվել են Արարատի պետական քոլեջի ֆեյսբուքյան էջում :

Ուսումնասիրելով դիտարկվող ժամանակաշրջանում կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թիվը, աճի միտում է արտացոլվում: Ուսանողների թվի ավելացումը պայմանավորված է քոլեջում կրթական ծառայությունների որակի բարձրացմամբ, ուսումնառության նկատմամբ առաջադրվող պահանջների խստացմամբ:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել տվյալ խնդիրների լուծման տարբերակները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում քոլեջից հեռացված ուսանողների թիվը կազմել է 171 հոգի, հեռացումների 60 տոկոսը պայմանավորված է եղել անհարգելի բացակայություններով, 35 տոկոսը՝ անբավարար գնահատականների, իսկ 5 տոկոսը՝ քննաշրջանին չմասնակցելու պատճառով: Վերականգնված ուսանողների թիվը կազմել է 24 հոգի, որը հիմնականում պայմանավորված է պարտադիր զինվորական ծառայության մեկնած ուսանողների թվով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:	
Հիմքեր	Դիմումների, առաջարկությունների, կարծիքների արտահայտման մատյան.pdf Ուսանողների օգնության հատկացման կարգ.pdf ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf

Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը Արարատի պետական քոլեջում որոշ մասով դրսևորվում է ուսանողների ուսման վարձավճարի լրիվ և մասնակի փոխհատուցման ձևով, ուսանողական նպաստների հատկացման, կրթաթոշակների տրամադրումով՝ համաձայն Ուսանողների օգնության հատկացման կարգ.pdf-ի: Արարատի պետական քոլեջում առանց ծնողի խնամքի մնացած, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամներին ու հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձանց, զոհված զինծառայողների երեխաներին հատկացվում է օգնություն՝ սահմանված ՀՀ օրենքներով:

Քոլեջի 2018-2023թթ. զարգացման ծրագրում նախատեսվում է ավելի մանրամասն ուսումնասիրել և վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները, գնահատել մատուցվող ծառայությունների բավարարվածությունը ուսանողների կողմից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:	
Հիմքեր	Հոգեբանի աշխատակարգ.pdf Կարիերայի կենտրոնի կանոնակարգ.pdf

Պատասխանել հետևյալ հարցին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	100
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	80
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	70

Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվու՞մ են խորհրդատուներ:	+	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվու՞մ է:		

Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Արարատի պետական քոլեջը, որպես կրթական առաքելություն իրականացնող հաստատություն, մշտապես ձգտում է կրթության տրամադրման մատչելիությանը, դրա արդյունքում ձեռք բերվող կարողությունների և հմտությունների կայունությանը: Այս կոնտեքստում կա հստակ ներդրված մշակույթ՝ համաձայն որի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները

տրամադրում են լրացուցիչ խորհրդատվություն դասը դժվար յուրացնող ուսանողների շրջանում:

Սկսած 2020թ. հունվար ամսից՝ քոլեջում իր ակտիվ գործունեությունն է ծավալում նաև մանկավարժ-հոգեբան-ը, ով ուսանողների հետ տարվող աշխատանքում իր դրական ազդեցությունն է ունենում վերջիններիս ոչ միայն հոգեբանական կայացման, այլ նաև կրթական մակարդակի բարձրացման մեջ:

Կարևոր և էֆեկտիվ են նաև կարիերայի կենտրոնի պատասխանատուի կողմից անցկացվող սեմինար-պարապմունքները, որոնք իրենց հերթին դրական են ազդում ուսանողների ուսումնառության արդյունավետության վրա: Այն անհատական եղանակով ուսանողներին մատուցում է կարիերայի տեղեկատվություն, խորհրդատվություն և ուղղորդում, ուղղորդում է դեպի իրենց մասնագիտությանը համապատասխան աշխատաշուկա՝ տրամադրելով տեղեկատվություն աշխատաշուկայում առկա և կանխատեսելի թափուր աշխատատեղերի մասին Կարիերայի կենտրոնի կանոնակարգ.pdf:

Ե՛վ հոգեբանի, և՛ կարիերայի կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվող հանդիպումները սովորողների շրջանում անձնային որակների, նախասիրությունների, կարողությունների բացահայտման միտում ունեն և արդեն հասցրել են դառնալ սիրելի և սպասված:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր	ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf

Պատասխանել հետևյալ հարցին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	

Վերլուծել լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Առաջիկայում նախատեսվում է մշակել ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու ընթացակարգ և քաղաքականություն՝ համաձայն 2018-2023թթ. Արարատի պետական քոլեջի զարգացման ծրագրի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր	Կարիերայի կենտրոնի կանոնակարգ.pdf

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	100
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	80
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	60

Վերլուծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Արարատի պետական քոլեջի կարիերայի ստորաբաժանումը գործում է 2018 թվականից և պատասխանատու է ուսանողների կարիերայի արդյունավետ ուղղորդման ծառայությունների մատուցման համար՝ համաձայն Կարիերայի կենտրոնի պատասխանատուի գործունեության կանոնակարգ.pdf-ի:Կարիերայի պլանավորման կարողությունների ձևավորման միջոցով, այն նպաստում է աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցում իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը: Կարիերայի պատասխանատուն իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու շնորհիվ, գործատուների հետ համագործակցության արդյունքում, ուսանողներին հնարավորություն է ընձեռում ստանալ տեղեկատվություն առկա և կանխատեսվող թափուր աշխատատեղերի մասին, զարգացնել աշխատանքային հմտություններ և ձեռք բերել փորձառություն:

Կարիերայի պատասխանատուն կարիերայի ուղղորդման գործառույթների շրջանակում համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի, Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների, սոցիալական գործընկերների համապատասխան պետական և մասնավոր այլ կազմակերպությունների հետ: Կարիերայի պատասխանատուի ջանքերով ուսանողները մասնակցել են բազում աշխատանքային տոնավաճառների, սեմինարների, ցուցահանդեսների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հիմքեր	Հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի ռազմավարությունը.pdf Հետազոտությունների կազմակերպման և համակարգման կառուցվածքային սխեման.pdf ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf 2019-2020 ուստարվա որակի ապահովման ենթակառուցվածքի հաշվետվություն.pdf Աուդիտ 2019.pdf ԱՊՔ տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf Դասալսումներ.pdf Հաշվետվություն արտաքին շահակիցներին.pdf Պատմություն առարկայի դրվածքը.pdf Բիզնես ծրագիր.pdf

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը /առկայության դեպքում/:

№	Ուսումնառողներ	*2015 / 2016*	*2016 / 2017*	*2017 / 2018*	*2018 / 2019*	*2019 / 2020*
1.	Մասնագետ					

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների /առկայության դեպքում/:

№	Հետազոտական ծրագիր /առկայության դեպքում/	*2015 / 2016*	*2016 / 2017*	*2017 / 2018*	*2018 / 2019*	*2019 / 2020*
1.						

2.						

Ուսումնառողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ հրապարակված և կամ ցուցադրված /առկայության դեպքում/:

№	Տպագրված աշխատանք	*2015*	*2016*	*2017*	*2018*	*2019*	*2020*
1.							
2.							

Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համաձայն քոլեջի ռազմավարական ծրագրի՝ հաստատությունն ունի առաքելություն սովորողներին տրամադրելու համակողմանի գիտելիք, կարողություններ, հմտություններ և այդ հիմքով շրջանավարտներին աշխատաշուկա ուղղորդելու: ՄՈՒՀ-ն առաջարկում է տարատեսակ մասնագիտություններ, որոնք յուրաքանչյուր տարվա ընթացքում կատարվող մշտադիտարկումների արդյունքնում, պարբերաբար թարմացվում են ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf: Համաձայն հետազոտական ոլորտի հավակնություններն արտահայտող մշակված քաղաքականության՝ հաստատության ներսում իրականացվող քննարկումները, դիտարկումները և վերլուծություններն արտացոլվում են քոլեջում գործող ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններում 2019-2020 ուստարվա որակի ապահովման ենթակառուցվածքի հաշվետվություն.pdf, Աուդիտ 2019.pdf, ԱՊՔ տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf, Դասալսումներ.pdf, Հաշվետվություն արտաքին շահակիցներին.pdf, Պատմություն առարկայի դրվածքը.pdf:

Ուսանողների շրջանում հետազոտական աշխատանքներն իրականացվում են առանձին մոդուլների, առարկաների (ըստ մոդուլի/առարկայի առանձնահատկության), ուսումնական և նախաավարտական պրակտիկաների շրջանակներում /Բիզնես ծրագիր.pdf, Հետազոտությունների կազմակերպման և համակարգման կառուցվածքային սխեման.pdf, Նախաավարտական պրակտիկայի հաշվետվություն.pdf, Ուսանողի հետազոտական գործունեության բավարարվածության վերլուծություն.pdf: Վերջիններս նպաստում են սովորողների ինքնուրույն մտածողության, ինքնուրույն խոսք արտահայտելու, ուսումնասիրության համար ճիշտ մեթոդ ընտրելու, գրավոր նյութի մշակման էթիկայի ձևավորմանը: Այս գործընթացում էական կարևորություն է տրվում ակադեմիական ազնվությունը պահելու մշակույթին Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող բաղաբականություն.pdf:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Հիմքեր	Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf Ուսանողական խորհրդի կանոնադրություն ԱՊՔ.pdf Ուսանողների գնահատման,բողոքարկման, հաճախումների և մատենավարման կարգ.pdf

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	

Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Արարատի պետական քոլեջում իրավախորհրդատուի հաստիք գործում է 2020թ. հունվար ամսից սկսած: Մինչ այդ ուսանողների իրավունքների պաշտպանության համար նախատեսված առանձին պատասխանատու մարմին չի եղել, սակայն քոլեջի բոլոր օղակներն իրենց բարեհամբույր, փոխըմբռնող և փոխզիջող վերաբերմունքով ուսանողների իրավունքների պաշտպանության համար ձեռնարկել են համապատասխան քայլեր: Այս կոնտեքստում մեծապես կարևորվում է նաև կուրսղեկների կատարած աշխատանքը, ովքեր մշտական հետևողական աշխատանք են ցուցաբերում ոչ միայն գիտելիքի հարստացման, այլ նաև բարոյահոգեբանական, աշխարհայացքի, մտածողության զարգացման գործում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Հիմքեր	Դիմումների, առաջարկությունների, կարծիքների արտահայտման մատյան.pdf ՈՒսանողական խորհրդի կանոնադրություն.pdf Հարցաթերթիկի օրինակ.pdf

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջում գործում է ուսանողների դիմումների, առաջարկությունների, կարծիքների արտահայտման մատյան, որում ինքնարտահայտվելու հնարավորություն ունեն ինչպես ուսանողները, այնպես էլ արտաքին շահակիցները (ավարտական քննական հանձնաժողովի անդամներ, գործատուներ, հյուրեր) /Դիմումների, առաջարկությունների, կարծիքների արտահայտման մատյան.pdf/: Կրթության որակի ապահովման ենթակառուցվածքի պատասխանատուի կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ ուսանողների շրջանում անցկացվում են հարցումներ, որոնք տեսանելի են դարձնում սովորողների կրթական բավարարվածության մակարդակը /Հարցաթերթիկի օրինակ.pdf/:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):

№	Զբաղվածություն/ուսման շարունակություն	2015 / 2016	2016 / 2017	2017 / 2018	2018 / 2019	2019 / 2020
1.	Ավարտելուց անմիջապես հետո	-	-	11	16	30
2.	Նախքան ավարտելը	-	-	-	-	-
3.	Մասնագիտությամբ	-	-	25	34	43
4.	Ոչ մասնագիտությամբ	-	-	8	15	14
5.	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	36,36	29,41	36,36	26,31	43,75
6.	Գործազուրկ ուսանողների տոկոսը	-	-	75	64	65

7.	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը					

Վերլուծել Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Ուժեղ կողմեր 1.Դիմորդների թվաքանակի աճ /հիմք՝ դիմորդների շարժի ուսումնասիրությունը վերջին 5 տարվա կտրվածքով/ 2.Ընդունելության արդյունքների թափանցիկության ապահովում (արդյունքների հրապարակման փաստաթղթեր 3.Ընդունելության իրականացման հստակ որոշված մեխանիզմ /հիմք՝ ընդունելության կարգ/ 4.Քոլեջում գործում է կարիերայի կենտրոն /մասնագիտական կողմնորոշման կենտրոն/ 5.Ուսանող-գործատու փոխշահավետ համագործակցություն /Պրակտիկայի բաժնի և կարիերայի կենտրոնի աջակցություն/ 6.Ուսանողների կողմից ուսումնառության, նաև դասախոսների վերաբերյալ հավաքագրված արձագանքները /հիմք՝ որակի պատասխանատուի կողմից հարցաշարերի միջոցով հարցումների իրականացում/	***Թույլ կողմեր*** 1.Նոր ուսումնական տարում ընդունված ուսանողներին վարչական աշխատակազմին դիմելու հստակ մեխանիզմի բացակայություն 2.Ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի բացակայություն 3.Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկությունների ոչ ամբողջական լինելը
Հնարավորություններ 1.Աշխատանքային տոնավաճառների կազմակերպում գործատուների կողմից 2.Քոլեջի հետ համագործակցող գործատուների ցանցի ընդլայնում 3.Շարունակական կրթության ապահովում Հայաստանի Հանրապետության լավագույն Բուհերում /հիմք՝ Բուհերի հետ կնքված պայմանագրեր/	***Վտանգներ*** 1.Հասարակական տրանսպորտի բացակայություն(հեռավոր գյուղերում, հիմք՝ դիմորդների կարծիքներ) 2.Որոշ մասնագիտությունների գծով սահմանված տեղերի քանակից պակաս դիմում-հայտերի առկայություն 3.Մասնագիտությունների լճացում և աշխատատեղերի պակաս

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝

- ***շրջանավարտների հետ կապերի պահպանման համակարգի բարելավում,***
- ***մարզային զարգացման ծրագրերում ԱՊՔ-ի ներգրավվածություն***

V. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ, ՎԱՐՊԵՏՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-երի նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:***

ԱՊՔ-ում դասավանդում են երկար տարիների փորձ ունեցող, բարձրագույն կրթությամբ դասախոսներ, վարպետներ, ովքեր իրենց մասնագիտական հմտությունները կատարելագործում են՝ պարբերաբար մասնակցելով վերապատրաստման դասընթացների: Քոլեջը մեծ տեղ է տալիս երիտասարդ մասնագետներին, որոնց իրենց փորձն ու գիտելիքներն են փոխանցում բարձր որակավորմամբ դասախոսները: Վերապատրաստումները ևս իրենց դրական ազդան են հաղորդում հատկապես երիտասարդ դասախոսական կազմի շրջանում: ԱՊՔ-ում համատեղությամբ աշխատում են դասախոսներ, վարպետներ:

ԱՊՔ-ի համար ռազմավարական նպատակ է՝

Զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:	
Հիմքեր	Աշխատանքի ընդունման և հեռացման կանոնակարգ.pdf Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմն՝ ըստ որակավորումների 2019-2020.xlsx Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմն՝ ըստ որակավորումների 2020-2021.xlsx Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ տնօրենի, փոխտնօրենների, ամբիոնների վարիչների, մանկավարժների, բաժանմունքի վարիչների և ուսանողների իրավունքներն ու պարտականությունները.pdf

Տնօրենի թեկնածուն ընտրվում է խորհրդի սահմանած մրցութային ընթացակարգով: Լիազորված մարմինը մրցույթի արդյունքում խորհրդի կողմից հաղթող ճանաչված տնօրենի թեկնածուի կամ թեկնածուներից մեկի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է պայմանագիր /Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf/:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունումը և հեռացումը կատարվում է՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգիրքը և քոլեջի կանոնադրությունը /Աշխատանքի ընդունման և հեռացման կանոնակարգ.pdf/: Վերջին տարիներին աշխատանքի են ընդունվել երիտասարդ մասնագետներ: Դասախոսների և վարպետների ընդունելությունը իրականացվում է բաց մրցույթով՝ նախօրոք հայտարարված թափուր հաստիքի հրավերով: Այլ աշխատանքի փոխադրելը, աշխատանքի էական պայմանների փոփոխությունը և աշխատանքային պայմանագրի լուծումը կատարվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներին համապատասխան /Աշխատանքի ընդունման և հեռացման կանոնակարգ.pdf/:

Դասալսումների, ուսումնառողների գնահատման վերջնարդյունքների, հարցումներից ստացված պատասխանների հիման վրա կատարվում է որակի գնահատում, որը հիմք է հանդիսանում համապատասխան դասախոսի/դասախոսների վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար: Քոլեջի ղեկավարությունը պարբերաբար գնահատում է իր դասախոսական և

ուսումնաօժանդակ աշխատակազմի մասնագիտական որակներն ու աշխատանքները, կազմակերպում վերապատրաստման դասընթացներ, անհրաժեշտ պայմաններ ստեղծում մասնագիտական մակարդակի բարձրացման համար /ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ տնօրենի, փոխտնօրենների, ամբիոնների վարիչների, մանկավարժների, բաժանմունքի վարիչների և ուսանողների իրավունքներն ու պարտականությունները.pdf/:

Ստորև ներկայացված է՝ տնօրենի, փոխտնօրենի, դասախոսների և վարպետների հաստիքացուցակը.

Տնօրեն Փոխտնօրեն Դասախոսներ Վարպետներ

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կրթությունը	Մանկավարժական ստաժ
1.	Գասպարյան Էլլա Գագիկի	Բարձրագույն	20
2.	Հայկյան Սուսան Զավենի	Բարձրագույն	25
3.	Մկրտչյան Անահիտ Երվանդի	Բարձրագույն	24
4.	Սարգսյան Անահիտ Սարգսի	Բարձրագույն	48
5.	Վարդանյան Գոհարիկ Գրիգորի	Բարձրագույն	20
6.	Սահյան Նինել Էդիկի	Բարձրագույն	4
7.	Աբրահամյան Սուսաննա Եղիշի	Բարձրագույն	36
8.	Վարդազարյան Ռուզաննա Վլադիմիրի	Բարձրագույն	13
9.	Այվազյան Ռուբիկ Զոհրապի	Բարձրագույն	2
10.	Թամրազյան Գոհար Ալբերտի	Բարձրագույն	25
11.	Սարգսյան Կարինե Աշոտի	Բարձրագույն	4
12.	Գևորգյան Մարիամ Սլավիկի	Բարձրագույն	4
13.	Սահակյան Ալինա Ալեքսեյի	Բարձրագույն	8
14.	Մարգարյան Մարինե Զավենի	Բարձրագույն	26
15.	Խաչատրյան Մարինե Պետիկի	Բարձրագույն	7
16.	Հովհաննիսյան Տաթևիկ Գագիկի	Բարձրագույն	5
17.	Մուսախանյան Քերոբ Մանսուրի	Բարձրագույն	6
18.	Մելոյան Սամվել Միշայի	Բարձրագույն	8
19.	Բաբայան Տիգրան Բաբկենի	Բարձրագույն	7
20.	Օրդաքյան Խաչիկ Ավետիսի	Բարձրագույն	1
21.	Թովմասյան Լիդա Ժիրայրի	Բարձրագույն	5
22.	Աբրահամյան Հասմիկ Հովհաննեսի	Ը/Մ	4
23.	Բաղդասարյան Նելլի Վարդանի	Բարձրագույն	2
24.	Մեհրաբյան Նարինե Կարոյի	Բարձրագույն	3
25.	Հարությունյան Նվարդ Արամայիսի	Բարձրագույն	3
26.	Աբրահամյան Լյուդմիլա Արմենի	Բարձրագույն	2
27.	Գրիգորյան Նարինե Մանուկի	Բարձրագույն	2
28.	Նահապետյան Պայծառ Գաբրիելի	Բարձրագույն	26

29.	Տերտերյան Սերինե Սամվելի	Բարձրագույն	3
30.	Համբարձումյան Լիլիթ Արթուրի	Բարձրագույն	4
31.	Մովսիսյան Ռուզաննա Աղավարդի	Մ/Մ	2
32.	Մարտիրոսյան Լիլիկ Պարույրի	Բարձրագույն	2
33.	Բաբայան Դիաննա Ռուբիկի	Բարձրագույն	1
34.	Հովհաննիսյան Մերի Հակոբի	Բարձրագույն	1
35.	Դավթյան Արաքս Բորիսի	Մ/Մ	1
36.	Զախարյան Էլվիրա Գագարինի	Բարձրագույն	2
37.	Գևորգյան Տիգրան Գևորգի	Բարձրագույն	2
38.	Գրիգորյան Նելլի Արամի	Մ/Մ	5
39.	Սարգսյան Լիլիթ Ռաֆիկի	Բարձրագույն	1

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմքեր	Սպասարկման կազմակերպում,, մասնագիտության ՊԿՉ.pdf ,,Հաշվապահական հաշվառում,, մասնագիտության ՊԿՉ.pdf ,,Ֆինանսներ,, մասնագիտության ՊԿՉ.pdf

Քոլեջի դասախոսական կազմի և վարպետների մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված տվյալ ծրագրերին համապատասխանող կրթական չափորոշիչներում: Յուրաքանչյուր նոր լիցենզավորվող մասնագիտության համար կազմվում են համապատասխան մոդուլների/առարկաների ուսումնական ծրագրեր՝ հիմնվելով ՊԿՉ-ների վրա: Համաձայն ներկայացվող պահանջների՝ ծրագրերը կազմում են դասախոսական կազմի այն ներկայացուցիչները, որոնց մասնագիտական որակավորումները համապատասխանում են տվյալ մասնագիտության բնույթին կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում ունեն աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում /Սպասարկման կազմակերպում,, մասնագիտության ՊԿՉ.pdf, ,,Հաշվապահական հաշվառում,, մասնագիտության ՊԿՉ.pdf, ,,Ֆինանսներ,, մասնագիտության ՊԿՉ.pdf/: Կազմված ծրագրերը քննարկվում և հավանության են արժանանում համապատասխան ամբիոնների, մեթոդական խորհրդի, մանկավարժական խորհրդի նիստերում, իսկ վերջում՝ հաստատվում տնօրենի կողմից:

ԱՊՔ-ի դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների կատարողականի վառ ապացույցն այն է, որ քոլեջի շրջանավարտներին մեծ սիրով ընդունում են տարբեր պետական ԲՈՒՀ–եր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հիմքեր	ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ տնօրենի, փոխտնօրենների, ամբիոնների վարիչների, մանկավարժների, բաժանմունքի վարիչների և ուսանողների իրավունքներն ու պարտականությունները.pdf ԱՊՔ լեզուների հանձնաժողովի զարգացման պլան.pdf

	ԱՊՔ Տնտեսագիտական հանձնաժողովի 2019-2020 թթ. զարգացման ծրագիր.pdf Հարցաթերթիկի օրինակ.pdf

Դասախոսների, վարպետների մասնագիտական որակների գնահատում իրականացվում է բաժնի վարիչների, ինչպես նաև փորձառու դասախոսների դասալսումների վերլուծությունների արդյունքում, ուսանողների կարողությունները ուսումնասիրելու միջոցով /ԱՊՔ լեզուների հանձնաժողովի զարգացման պլան.pdf, ԱՊՔ Տնտեսագիտական հանձնաժողովի 2019-2020 թթ. զարգացման ծրագիր.pdf/: Փորձառու մասնագետների, բաժնի վարիչների, մեթոդական խորհրդի պատասխանատուի, ուսումնական գծով փոխտնօրենի, որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացված դասալսումների արդյունքներն ամփոփվում և վերլուծվում են ոչ միայն դասալսումների մատյաններում, այլ նաև քննարկվում են, նշվում առավելությունները, արդյունավետության մակարդակը, ընդգծվում թերությունները, մասնագիտական փորձի փոխանակում, առաջարկություններ արվում /Դասալսումներ.pdf/: Մասնագետները պարբերաբար վերապատրաստվում են՝ մասնակցելով տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվող դասընթացներին, մշտապես աշխատում են իրենց ինքնակրթության վրա:

Դասախոսական կազմի պարբերական գնահատման համար քոլեջում գործում են մի շարք ընթացակարգեր: Այդ ընթացակարգերի շարքում կարևորվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները /Հարցաթերթիկի օրինակ.pdf/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Հիմքեր	ԱՊՔ ՈՒսումնական մասի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf /ԱՊՔ տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf/ ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf

Արարատի պետական քոլեջի ուսումնական մասը ունի պարտավորություն կազմակերպելու, իրականացնելու և վերահսկելու ողջ ուսումնահիմացական գործընթացը, խթանելու դասավանդողների և դասավանդվողների գործունեությունը: Ուսումնական մասի գործունեությունը միտված է դասախոսների մասնագիտական աճին, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ուսանողների կողմից հաստատուն գիտելիքների, հատուկ և համաուսումնական կարողությունների և հմտությունների ձեռք բերմանը /ԱՊՔ ՈՒսումնական մասի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf/:

Քոլեջի մանկավարժական աշխատողների վերապատրաստումը պարտադիր է և անցկացվում է՝ ըստ տնօրենի ներկայացրած հայտի: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում վերապատրաստվում է քոլեջի դասախոսների և վարպետների մոտ 15-20%-ը: Տնօրենը, տվյալ տարվա մինչև հունվարի 30-ը ներառյալ մանկավարժական աշխատողների 20%-ի անվանացանկը (զբաղեցրած պաշտոնը, կոնտակտային տվյալները) ներկայացնում է վերապատրաստող կազմակերպություն: Ընդհանուր առմամբ վերջին 3 տարիների ընթացքում տարբեր ՊՈԱԿ - ների կողմից վերապատրաստվել է 50-60 %-ը /Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կանոնակարգ.pdf/:

2020 թվականի մայիսի 4-18-ը ընկած ժամանակահատվածում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ՄԿՈՒ հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման հեռավար ձևով անցկացված դասընթացին վերապատրաստվել է 7 դասախոս /ԱՊՔ տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf/:

Դասավանդողների որակների բացահայտման և, առհասարակ, քոլեջի կրթական առաքելության

ի կատար ածման գնահատման մեխանիզմներից է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին անցկացվող ներքին գնահատումը, որն առավել տեսանելի է դարձնում ողջ ուսումնական տարում արված աշխատանքը և հնարավորություն տալիս կազմելու հաջորդող ուսումնական տարվա զարգացման ծրագրերը /ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf/:
ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմքեր	ԱՊՔ -ի աշխատանքային խորհուրդներ և հանձնաժողովներ.pdf ԱՊՔ-ի 2019-2020թթ. աշխատանքային պլան.pdf Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմն՝ ըստ որակավորումների 2020-2021.xlsx

Հաստատությունում ռազմավարական նպատակների իրականացման համար աշխատում է 40՝ հիմնական և 1՝ աշխատանքը համատեղությամբ իրականացնող վարչական և ուսումնաօժանդակ աշխատակից /Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմն՝ ըստ որակավորումների 2020-2021.xlsx/: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում մանկավարժական խորհրդի քննարկմամբ և տնօրենի հրամանով կազմվում են աշխատանքային խորհուրդներ և հանձնաժողովներ (տնօրինական խորհուրդ, կուրսղեկական խորհուրդ, տարիֆիկացիոն հանձնաժողով, թոշակավորող հանձնաժողով, գրադարանային խորհուրդ, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հանձնաժողով, ներքոլեջային վերահսկողության հանձնաժողով, մեթոդական խորհուրդ, որակի վերահսկողության հանձնաժողով, գնումների հանձնաժողով, մանկավարժական խորհուրդ) /ԱՊՔ -ի աշխատանքային խորհուրդներ և հանձնաժողովներ.pdf/: Աշխատանքային խորհուրդներից և հանձնաժողովներից յուրաքանչյուրը կազմում է իր աշխատանքային պլանը, նիստերի օրակարգը, եթե այդպիսիք ներառված են տվյալ հանձնաժողովի աշխատանքային գործառույթներում: Ողջ ուսումնական տարվա ընթացքում բոլոր խորհուրդները և հանձնաժողովները գտնվում են փոխհամագործակցության մեջ՝ միտված լինելով ռազմավարական նպատակների իրականացմանը:

Ուժեղ կողմեր 1.ԱՊՔ-ի վարկանիշը բարձր է տարածաշրջանում, իր վարած քաղաքականության շնորհիվ 2.ԱՊՔ - ի դասախոսները և վարպետները, ինչպես նաև ուսումնաօժանդակ կազմը, ունեն մասնագիտական որակավորումներ իրենց կատարած աշխատանքում 3.Հստակ կանոնակարգեր 4.Երիտասարդ կադրերի համալրում	***Թույլ կողմեր*** 1.Գործատու դասախոսների և վարպետների պակաս 2.Գործատուների և դասախոսների /վարպետների/ համագործակցության պակաս 3.Կրթական նորամուծություններին դասախոսների դանդաղ հարմարվողականություն
Հնարավորություններ 1.Դրամաշնորհներ 2.Վերապատրաստումներ 3.Տնտեսագիտական, արտադրական, առողջապահական ոլորտի որակյալ, մրցունակ մասնագետների պատրաստում 4.Շարունակական կրթության առկայություն /հիմք՝ տարբեր ԲՈՒՀ-երի հետ կնքված պայմանագրեր	***Վտանգներ*** 1.Ֆինանսական սուղ վիճակ, որով պայմանավորված՝ երիտասարդ և հմուտ կադրերը չեն ցանկանում աշխատել 2.Տարածաշրջանի այլ քոլեջներում հնարավոր շահավետ առաջարկություններ 3.Խրախուսման համակարգի ոչ լիարժեք գործունեություն՝ պայմանավորված ֆինանսական միջոցների սակավությամբ

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝

- *դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար շարունակել ապահովել աշխատանքային բարենպաստ միջավայր՝ մեծացնել վերապատրաստումների /այդ թվում նաև նեղ մասնագիտական/, ինչպես նաև խրախուսման համար տրամադրվող ֆինանսական միջոցները,*
- *շարունակել կարևորել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի թվային հմտությունների և կարողությունների զարգացումը:*

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:***

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Քոլեջի ռազմավարական հիմնախնդիրների և առաքելության նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նախանշել միջին մասնագիտական ոլորտի մասին նոր պատկերացումներ, ճշտել այն խնդիրների ցանկը, որը կկարողանա լուծել արդի պահանջներին համապատասխանող գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելու համար:

Դրա համար անհրաժեշտ է ուսանողների մեջ արմատավորել աշխատանքների և հմտությունների նկատմամբ պատասխանատվության զգացողություն: Ռազմավարական ծրագրում առանձնացվում են մանկավարժների ուսանողներին ներկայացվող հետազոտական աշխատանքների կատարման չափանիշները և պահանջները, որոնք իրականացվում են ինչպես մոդուլային ծրագրերի, այնպես էլ արտադրական, ուսումնական և նախաավարտական պրակտիկաների շրջանակներում: Դրանց արդյունքները ներկայացվում են պրակտիկաների պաշտպանության ժամանակ, որոնք կարողանում են բացահայտել ուսանողին՝ որպես ինքնուրույն հետազոտող:

Հետազոտական աշխատանքի անբաժան մասն են կազմում մշտադիտարկումներն ու հարցումները, որոնք իրականցվում են ինչպես ուսանողների, այնպես էլ մանկավարժների շրջանում:

Նախագծային աշխատանքները էականորեն նպաստում են ուսանողների ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործնականում ակադեմիական գիտելիքների կիրառմանը: Հետազոտական աշխատանքներում մանկավարժների առավել մեծ թվով ներգրավվածություն կարելի է ապահովել կլոր սեղան-քննարկումներ անցկացնելու միջոցով, որոնցում ներգրավված կլինեն նաև այլ հաստատությունների (այդ թվում նաև այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, մանկավարժներ, մասնագետներ):

Խիստ կարևորվում են հետազոտության և դասավանդման կապը, ստացված արդյունքները ուսումնական գործընթացում անմիջական կիրառումը, ինչպես նաև դրանց կանոնավոր և պարբերական բնույթը:

Հետազոտության առանձին գործառույթ է իրականացնում Կարիերայի կենտրոնը, որն ուսումնասիրում է տարածաշրջանում աշխատաշուկայի պահանջարկը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հիմքեր	Նախաավարտական պրակտիկայի հաշվետվություն.pdf Բիզնես ծրագիր.pdf Դասալսումներ.pdf Առարկայի դրվածքը.pdf Հարցաթերթիկի օրինակ.pdf Կարիերայի կենտրոնի կանոնակարգ.pdf

	Մարքեթինգային հետազոտությունների իրականացում մոդուլի ծրագիր.pdf

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Վերլուծել ՄՈՒՀ-ում իրականացվող հետազոտությունների արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջը մշակել է հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի ռազմավարություն, որն արտահայտված է ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրում առանձնացվում են մանկավարժների կողմից ուսանողներին ներկայացվող հետազոտական աշխատանքների կատարման չափանիշները և պահանջները, որոնք իրականացվում են ինչպես մոդուլային ծրագրերի, այնպես էլ արտադրական, ուսումնական և նախաավարտական պրակտիկաների շրջանակներում /Հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի ռազմավարությունը/:

ԱՊՔ սպասարկող ամբիններում հետազոտական աշխատանքներից է առարկայի դրվածքի ուսումնասիրումը, որը նպաստում է մի կողմից ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, իսկ մյուս կողմից խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակմանը /Առարկայի դրվածքը.pdf/:

Քոլեջի ամբիոնների աշխատանքային գրաֆիկում ներառված հետազոտական ուղղության առկայությունն են նաև փոխադարձ դասալսումները /Դասալսումներ.pdf/:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ որակի ապահովման ենթակառույցի կողմից ուսանողների շրջանում անցկացվում են հարցումներ, որը միտում ունի հետազոտելու սովորողների բավարարվածության աստիճանը ուսումնառության գործընթացից /Հարցաթերթիկի օրինակ.pdf/:

Կարիերայի կենտրոնի պատասխանատուի գործառույթներում էական տեղ է զբաղեցնում աշխատաշուկայի հետազոտությունը՝ կապված թափուր աշխատատեղերի, պահանջարկ վայելող մասնագիտությունների հետ, աշխատող շրջանավարների ուսումնասիրումը /Կարիերայի կենտրոնի կանոնակարգ.pdf/:

Ուսումնական գործընթացում ևս բազմաթիվ են առանձին առարկաների/մոդուլների շրջանակներում ուսանողներին հանձնարարվող հետազոտական աշխատանքները, ուսումնական և նախաավարտական պրակտիկաների հաշվետվությունները, որոնք միտում ունեն զարգացնել և կատարելագործել սովորողների կարողությունները ու պրակտիկ հմտությունները /Բիզնես ծրագիր.pdf, Նախաավարտական պրակտիկայի հաշվետվություն.pdf/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր	ԱՊՔ-ի 2019-2020 թթ աշխատանքային պլան.pdf

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱՊՔ-ում հետազոտական աշխատանքներին ուղղված ռազմավարությունը մշակվել է 2020թ., հետևաբար քոլեջի ստորաբաժանումների կողմից մշակված կարճաժամկետ պլաններում

հետազոտական աշխատանքներին վերաբերող կետեր դեռևս չկան:
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հիմքեր	Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականություն.pdf

Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացման ու նորարարություններին նպաստող ռազմավարությունը մշակվել է 2020թ., իսկ նախաավարտական հաշվետվությունների գնահատումը իրականացվում է ըստ համապատասխամ կարգերի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Հիմքեր	

Միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ, կոնֆերանսներին, մրցույթներին, փառատոներին, ցուցահանդեսներին մասնակցություն

№	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2013	2014	2015	2016	2017
1.							
2.							
	Կոնֆերանսներին (երկիրը)						
3.							
4.							
	Մրցույթ (երկիրը)						
5.							
6.							
	Ցուցահանդես (երկիրը)						
7.							
8.							

Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ցավոք, քոլեջը դեռևս միջազգային հարթակների հետ համագործակցային և գործընկերային կապեր չունի, ինչից էլ բխում է հետազոտական ոլորտում միջազգայնացման քաղաքականության բացակայությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Հիմքեր	Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջը մինչև 2020 թվականը չի ունեցել համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր՝ ուղղված հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն, սակայն որոշ մասնագիտությունների մոդուլներ պահանջում են ուսանողին գնահատել ինքնուրույն հետազոտական աշխատանքների արդյունքով՝ բիզնես- պլան, ռեֆերատներ, ուսումնասիրություններ, սոցիալական հարցումներ /Բիզնես ծրագիր.pdf/:

Նախատեսված է նաև նախաավարտական պրակտիկաների ընթացքու միրականացված ինքնուրույն հետազոտական աշխատանքների հիման վրա գնահատել ուսանողներին Նախաավարտական պրակտիկայի հաշվետվություն.pdf/:

Ուժեղ կողմեր	*Թույլ կողմեր*
1.Քոլեջի ամբիոնների աշխատանքային գրաֆիկում ներառված հետազոտական ուղղության առկայություն /փոխադարձ դասալսումներ, առարկաների դրվածք/ 2.Կրթության որակի ներքին ապահովման համակարգի կողմից իրականացվող հետազոտական աշխատանք 3.ՈՒսումնաարտադրական պրակտիկաների ընթացքում իրականացված հետազոտական աշխատանքների հիման վրա ծրագրված է ուսանողներին գնահատել ինքնուրույն հետազոտական աշխատանքների արդյունքով /հստակեցված պահանջներով նախաավարտական պրակտիկայի հաշվետվություն, նախորդ տարիներին՝ նաև օրագիր /հիմք՝ Պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգ/: 4.Կրթական վերջնարդյունքների վրա հիմնված տարբեր մոդուլների/առարկաների շրջանակներում պահանջվող հետազոտական աշխատանքների կարողություն /օրինակ՝«Մարքեթինգային հետազոտությունների իրականացում» մոդուլից, բիզնես ծրագրերի կազմում՝ «Ձեռներեցություն» մոդուլից /հիմք՝ համապատասխան մոդուլային ծրագրեր/ 5.Առանձին ստորաբաժանումների ընթացակարգերում ներառված է	1.Հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականություն և ընթացակարգ մշակված չէ

հետազոտական աշխատանք կատարելու գործառույթ	
Հնարավորություններ 1.Համագործակցություն այլ ուսումնական հաստատությունների հետ Եվրոպական և այլ ծրագրերում ընդգրկվածություն	***Վտանգներ*** 1.Հետազոտական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ելակետային տվյալների բացակայություն
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝ • ***ուսանողների և դասախոսների շրջանում հետազոտական աշխատանք կատարելու կարողությունների զարգացմանը նպաստող քաղաքականության մշակում:***	

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:***

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Արարատի պետական քոլեջի նպատակն է զարգացնել ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները: Դրա համար անհրաժեշտ է.

- Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները
- Արդիականացնել դահլիճների և սրահների տեխնիկական հագեցվածությունը
- Արդիականացնել մարզադահլիճը
- Իրականացնել ուսումնական մասնաշենքի և բակի վերանորոգման, կանաչապատման աշխատանքներ
- Վերանորոգել գրադարանը և գրապահոցը
- Զարգացնել հսկողությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Հիմքեր	ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf Անշարժ գույքի վկայական.pdf

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	70
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	70

Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, հետամուտ լինելով զարգացման ծրագրի նպատակներին և խնդիրներին, հետևողականորեն իրականացնում է նպատակային միջոցառումներ՝ ուղղված մասնագիտությունների կրթական ծրագրերի կադրային և նյութատեխնիկական ռեսուրսների ապահովմանը, դրանց շարունակական համալրմանն ու որակական բարելավմանը: Քոլեջը գործում է ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքում: Այն տեղակայված է Խանջյան 67 հասցեում 1 մասնաշենքով:

Քոլեջի մասնաշենքը հնարավորինս կահավորված և տեխնիկապես հագեցված է: ԱՊՔ-ի կրթական գործընթացը կազմակերպվում է մեկ մասնաշենքում՝ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված դահլիճ, մարզադահլիճ, գրադարան, համակարգչային կաբինետներ, նորագույն տեխնիկայով հագեցած ռոբոտատեխնիկայի «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, բուժսենյակ, սննդի ընդունման կետ, ուսուցչանոց, առարկայական 23 լսարան՝ զննական նյութերով, նախնական զինվորական պատրաստության կաբինետ, գինեգործության և հյութերի արտադրության համար նախատեսված՝ արդի պահանջներին համապատասխանող լաբորատորիա:



Չնայած 2017-2019 թթ. արտաբյուջետային միջոցներով ու «Անուշավան և Օֆելյա Աբրահամյաններ» կրթական հիմնադրամի ֆինանսավորմամբ ԱՊՔ-ի շենքում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ փոխվել են պատուհանները, դռներն ու սանհանգույցները և որոշ լսարաններ, սակայն դեռևս չվերանորոգված լսարաններ կան և լուրջ ներդրումներ են պահանջում:

Լսարաններում նստարանների շարքային դասավորվածությունը հնարավորություն է տալիս ուսանողներին ուղղահայաց ձևով տեսնել գրատախտակը և դասախոսին: Բացի այդ՝ ուսանողներն անհրաժեշտության դեպում հնարավորություն ունեն առանց միմյանց խանգարելու ազատ տեղաշարժվել լսարանում: Խմբային աշխատանքների ժամանակ դասախոսն առանց դժվարության փոխում է նստարանների դասավորությունը: Սքայ (SKYE) ակումբում և գինեգործության լսարաններում տեղադրված են նաև կլոր սեղաններ՝ դասերը ինտերակտիվ մեթոդներով և խաղերի կիրառմամբ անցկացնելու համար: Այս գույքը քոլեջը ստացել է 2018 թվականին՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Վորլդ Վիժն» (World Vision) կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից:

Լսարանի համարը	Լսարանի մակերեսը (քմ)	Սեղան-նստա-դարանների դասավորվա-ծության ձևը (շար-քերով, շրջանաձև, Տ-աձև, Պ-աձև, խառը)	Սեղան - նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմ-յանց միջև հեռա-վորությունները
№101	35.2	շարքերով	7 սեղ. 16 նստ.	0,5 մ
№102	37.3	Պ - աձև	5 սեղ. 17 նստ.	2 մ
№104	37.2	շարքերով	17 սեղ. 20 նստ.	3 մ
№105	37.3	շարքերով	12 սեղ. 20 նստ.	2 մ
№107	49.2	շարքերով	5 սեղ. 16նստ.	1 մ
№203	56.3	շարքերով	20 սեղ. 38 նստ.	80 սմ
№204	38.7	շարքերով	13 սեղ. 25 նստ.	1 մ
№206	51	շարքերով	18 սեղ. 35նստ.	80 սմ
№207	47.4	շարքերով	16 սեղ. 31 նստ.	80 սմ
№208	42.2	շարքերով	16 սեղ. 31 նստ.	80 սմ
№209	41	շարքերով	16 սեղ. 31 նստ.	80 սմ
№210	38.2	Պ - աձև	11 սեղ. 20 նստ.	4 մ
№300	37,5	շարքերով	14 սեղ. 28 նստ.	80 սմ
№301	39.2	շարքերով	14 սեղ. 28 նստ.	80 սմ
№303	38	շարքերով	14 սեղ. 28 նստ.	80 սմ
№304	37.8	շարքերով	15 սեղ. 30 նստ.	80 սմ
№305	38.3	շարքերով	15 սեղ. 30 նստ.	80 սմ
№306	39	շարքերով	14 սեղ. 28 նստ.	80 սմ
№308	41.3	շարքերով	12 սեղ. 24 նստ.	80 սմ
№309	41.2	շարքերով	15 սեղ. 20 նստ.	80 սմ
№310	39.3	շարքերով	14 սեղ. 28 նստ.	80 սմ
№312	38.2	շարքերով	14 սեղ. 28 նստ.	80 սմ
№313	38.4	շարքերով	15 սեղ. 30 նստ.	80 սմ

2018թ. «Անուշավան և Օֆելյա Աբրահամյաններ» կրթական հիմնադրամի օժանդակությամբ Արարատի պետական քոլեջում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, որտեղ առկա են եռաչափ 3D տպիչ, հաստոց, ռոբոտաշինության հավաքածուներ և այլ սարքեր:

Քոլեջն ունի գինեգործության լաբորատորիա, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ժամանակակից պահանջները բավարարող գինեգործության դաս անցկացնելու համար: Դասի ընթացքում քոլեջի դասախոսները մշտապես օգտագործում են ուսումնադիտողական պարագաներ (տեղեկատու պաստառներ, գինեգործության սարքավորումներ):

ԱՊՔ-ն ունի գործող և բավարար ֆիզիկական պայմաններով գրադարան, որը հագեցած է անհրաժեշտ ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով, և որից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, դասախոսները և վարչական կազմը:

Քոլեջի գրադարանն ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր օղակներից է. ուսանողների ուսուցման որակի վրա մեծ է գրադարանի պաշարների բովանդակության ներգործությունը:

Գրադարանն այսօր ունի 20 ուսանողի համար նախատեսված ընթերցասրահ և գեղարվեստական ու մասնագիտական գրականության, դասագրքերի գրապահոց: Ընթերցասրահը գեղեցիկ կահավորված է, որտեղ ստեղծված են հարմարավետ աշխատանքի բոլոր պայմանները: Կա համակարգիչ: Քոլեջի բոլոր ուսանողները 2019-2020 ուստարվա սեպտեմբերի 6-ի դրությամբ ապահովված են եղել դասագրքերով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունը և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Հիմքեր	Եկամուտներ ըստ եռամսյակի աճողականության 2018.pdf Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն 2017-2018.pdf Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն 2018-2019.pdf Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն 2019-2020.pdf

Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջի ռազմավարական նպատակներին հասնելու խնդիրներից է ուսումնական, գիտական նպատակներով գույքային համալիրի արդյունավետ վերակազմավորման և օգտագործման ապահովումը, ինչպես նաև լսարանային լաբորատոր պայմանների ապահովումը և տեխնիկապես վերազինումը, դահլիճների, սրահների տեխնիկական հագեցվածության արդիականացումը, գրադարանի գրապահոցի վերանորոգումը: Ընդհանուր առմամբ ծախսերը պլանավորվում են՝ հիմք ընդունելով ֆինանսական կարողությունները: Գործընթացներն ապահովվում են գնումների բաժնի միջոցով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Հիմքեր	Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվ 2020.pdf Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվ 2019.pdf

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջի ֆինանսական միջոցների կառավարման և դրանց բաշխման հիմքում ընկած են տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը: Նախահաշվի կազմման ժամանակ հաշվի են առնվում ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղվող միջոցների և անհրաժեշտ ռեսուրսների պահանջը: Հաշվապահական հաշվառման բաժինը եռամսյակային կտրվածքով ներկայացնում է հաշվետվություն՝ ստացված մուտքերի և ելքերի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ ծախսերի կառուցվածքը վերջին տարիներին էական փոփոխություններ չի կրել: Ծախսերի մեծ մասը՝ շուրջ 76%, բաժին է ընկնում աշխատանքի վարձատրությանը, իսկ 11%-ը՝ սոցիալական ապահովության վճարներին և կրթաթոշակներին: Եկամուտների մասով այլ մուտքերի ավելացումը ունի դրական միտում և նպաստում է ԱՊՔ-ի գործունեության կրթական ծրագրերի երաշխավորված շարունակականությանը: Քոլեջում ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը հիմնված է ֆինանսական համակարգի կատարելագործման, ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացման, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Հիմքեր	Արարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf Եկամուտներ ըստ եռամսյակի աճողականության 2018.pdf Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվ 2019.pdf Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվ 2020.pdf

Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱՊՔ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն: ԱՊՔ-ն նախապես պլանավորում է առաջիկա ֆինանսական տարվա համար պահանջվող ռեսուրսները՝ դրանց գնման գործընթացն ըստ օրենքի պահանջի իրականացնելու համար:
Ռեսուրսների պլանավորման և ձեռք բերման տեսանկյունից կարևորագույն գործոններն են աշխատաշուկայի պահանջներից ելնելով մասնագիտությունների կրթական ծրագրերի փոփոխությունները և նրանցում ուսանողների թվաքանակը: Քանի որ ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հատկացված լիցենզավորման տեղերի թվերի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում: Այդուհանդերձ, ուսանողների թվի որոշակի ավելացման դեպքում քոլեջը կկարողանա համապատասխան քանակի ռեսուրսներ ապահովել, օրինակ՝ լրացուցիչ ծանրաբեռնել դասավանդողներին կամ նոր դասավանդողներ ընդունել աշխատանքի և այլն:

Ռեսուրսային բազայի պահպանման և թարմացման նպատակով տարեկան բյուջեով մշտապես նախատեսվում են կապիտալ շինարարության և նորոգման ծախսեր, ինչպես նաև ընթացիկ նորոգման ծախսեր:

Քոլեջի ուսանողներն ու աշխատակիցները օգտվում են քոլեջի ողջ ռեսուրսային բազայից՝ համաձայն ԱՊՔ-ի կանոնադրությամբ ամրագրված իրավունքներիԱրարատի պետական քոլեջի կանոնադրություն.pdf:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:	
Հիմքեր	Արխիվի կանոնակարգ.pdf www.ascol.am

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման բարելավման համար 2020 թվականին ստեղծվեց քոլեջի կայքէջը՝ www.ascol.am: Նախատեսվում է ստեղծել միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար: Տեղեկատվական ռեսուրսների ժամանակակից չափանիշներին համապատասխան զարգացումը և դրանց արդյունավետ օգտագործման ու մատչելիության ապահովման ուղղությամբ տարվել և տարվում են համապատասխան աշխատանքներ:

Քոլեջի գործավարության կազմակերպումն իրականացնում է նաև քարտուղարությունը:

ԱՊՔ-ում առկա է նաև արխիվ, որը պատասխանատու է փաստաթղթերի առանձին տեսակների արխիվացման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:	
Հիմքեր	ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf ՔՊ շտաբի հանձնաժողովի և խմբերի ցուցակ.pdf Պաշտոնի նկարագրություն բուժքրոջ.pdf ՔՊ շտաբի պետի պաշտոնի նկարագրություն.pdf

Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը՝ հիմնվելով շահեկիցների արձագանքների վրա:

Քանի որ շահակիցները առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների հետ առնչվում են միայն ոչ ստանդարտ իրավիճակներում, ԱՊՔ-ն դրանց արդյունավետությունը փորձում է գնահատել անուղղակիորեն: Արդյունավետության հիմնական ցուցիչը համարվում է միջադեպերի կամ դժգոհությունների թիվը: Բուժկետի հետ կապված դժգոհություններ չեն արձանագրվել, իսկ անվտանգության ծառայության հետ կապված սակավաթիվ միջադեպերն արագ հարթվել են:

Վերլուծել ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱՊՔ-ի տարածքը ցանկապատված է և անվտանգ ուսանողների ազատ տեղաշարժման համար: Կա ԱՊՔ-ի մուտքի և բակի տեսահսկման համակարգ: ԱՊՔ-ի մուտքը հսկվում է օրվա հերթապահ-պահակի կողմից: Առանց կուրսղեկի և տնօրենի թույլտվության, ծնողի գիտության ուսանողը բոլոր դասերի ավարտից առաջ ԱՊՔ-ից դուրս գալ չի կարող: Դասերի ընթացքում սահմանված է հերթապահություն միջանցքներում:

ԱՊՔ-ի տարածքը գտնվում է ավտոճանապարհային գոտուն մոտ, բայց շրջակայքում կան բավարար անվտանգ անցումներ:

Քոլեջն ունի բացվող մեծ դարպաս, և արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:

ԱՊՔ-ի միայն շքամուտքն ունի թեքահարթակ՝ հարմարեցված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին, և նրանց հետ դասապրոցեսի անցկացման համար օգտագործվում են առաջին հարկի լսարանները:

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ԱՊՔ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբը՝ քոլեջում գործող քաղպաշտպանության տարհանման հանձնաժողովի և պարետի միջոցով: Քոլեջի բոլոր միջանցքներում և լսարաններում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաները: Քոլեջն ունի անհրաժեշտ թվով մուտքեր՝ ուսանողների տարհանումն արդյունավետ իրականացնելու համար:

ԱՊՔ-ում առկա է վերանորոգված բուժկետ՝ 1 որակավորված բուժաշխատողով, որն անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրել առաջին բուժօգնություն ուսանողներին ու աշխատակազմին: Բուժկետը գտնվում է ԱՊՔ-ի 1-ին հարկում՝ ունի 13քմ տարածք: Բուժկետում առկա են բոլոր անհրաժեշտ պարագաները (քաշը, հասակը չափելու սարք և դեղամիջոցները: Առկա է լվացարան՝ մշտապես հոսող սառը ջրով: Բուժկետը հետևում է նաև վարակիչ հիվանդություններ տարած ուսանողների առողջական վիճակին, դասախոսների առողջությանը, ԱՊՔ-ի տարբեր տարածքների սանիտարական վիճակին, փաստաթղթեր պատրաստում ուսանողների առողջության վերաբերյալ: Ցմեռային ամիսներին կատարվել է սուր շնչառական վարակների և ջերմային ռեժիմի օրական մոնիթորիգ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր	ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf

Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որպես կանոն, քոլեջում ռեսուրսների կիրառումը հասանելի է ուսումնաօժանդակ և դասախոսական ողջ կազմին: Իսկ որպես գնահատման մեխանիզմ, հանդիսանում են առարկայական կաբինետներում անցկացվող դասերը, որոնց արդյունավետությունը երևում է ոչ միայն դասալսումների և բաց դասերի ժամանակ, այլ նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքում:

Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
1.Քոլեջում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր /համապատասխան առարկայական կաբինետներ, գինեգործական լաբորատորիա, «Արմաթ» լաբորատորիա, վերանորոգված ուսումնական մասնաշենք, կանաչապատված բակ, հսկողության զարգացվածություն, հասարակական սննդի կետ /հիմք՝ Զարգացման ծրագիր/ 2.Կաբինետների հագեցվածություն, տեխնիկապես զինվածություն, արհեստագործական համակարգում համապատասխան ռեսուրսների առկայություն 3.Գրադարանի հագեցվածություն	1.Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների բացակայություն 2.Ոչ արդիականացված մարզադահլիճ 3.Հանգստի և մարզաառողջարանային պայմանների բացակայություն 4.Սահմանափակ հնարավորությունների տեր մարդկանց ազատ տեղաշարժի և այլ պայմանների բացակայություն 5.Հրդեհի ժամանակ դեպի ելք ցույց տվող նշագծերի, սլաքների բացակայություն 6.Կաբինետներում հակահրդեհային կրակմարիչների բացակայություն

մասնագիտական և գեղարվեստական գրքերով 4.Ռեսուրսների բաշխման մեխանիզմ 5.Կանոնակարգված կերպով փաստաթղթաշրջանառության իրականացում /հիմք՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի կիսամյակային և տարեկան ամփոփիչ հաշվետվությունները/ 6.Բուժկետի առկայություն 7.Անվտանգության պահպանման ծառայությունների առկայություն /, տարհանման պլաններ, տարհանման համար նախատեսված աստիճաններ, հակահրդեհային ինքնաշխատ միջոցների, ուսումնական շենքի դիմաց հետիոտնային անցում, բակի առկայություն/ 8.Հաշմանդամություն ունեցող անձանց համար մուտքի թեքահարթակների առկայություն 9.Ստորաբաժանումների կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություններ, գնահատման մեխանիզմի առկայություն, ներքին որակի վերահսկողության վերլուծություն	
Հնարավորություններ 1.Դրամաշնորհներ 2.Համագործակցություն տարբեր կազմակերպությունների հետ /«Վորլդ Վիժն-Հայաստան»/ 3.Ուսանող-գործատու կապի ապահովում /այցելություն գործարաններ, սեմինարների, վերապատրաստումների, մրցույթների/ 4.Փաստաթղթաշրջանառության իրականացման էլեկտրոնային տարբերակ 5.Անվտանգության ապահովման համար նախատեսված նոր սարքավորումների ձեռքբերում	***Վտանգներ*** 1.Բնական աղետ 2.Ժամանակի սղություն 3.Դիմորդների կրթական մակարդակի անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին 4.Համակարգային խափանումներ 5.Գնահատման նոր մեթոդների կիրառման անարդյունավետություն
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝ ***· Ժամանակի կառավարման մեխանիզմի մշակում*** ***· Մուտքի և ելքի վերահսկողության համակարգի ներդրում*** ***· Շենքային պայմանների բարելավում***	

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր: ԱՊՔ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Կրթության մասին», «ՀՀ միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով, ՀՀ Կառավարության որոշումներով, ինչպես նաև ԱՊՔ կանոնադրությամբ: ԱՊՔ կառավարման բարձրագույն մարմինը խորհուրդն է, որը, համաձայն ԱՊՔ կանոնադրության լսում և գնահատում է ԱՊՔ –ի տարեկան գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը, որն ապահովում է հաշվետվողականութուն: ԱՊՔ կառավարման խորհրդի տարեկան նիստին տնօրենը ներկայացնում է հաշվետվություն անցած տարվա գործունեության մասին, ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի կատարողականը և այլ փաստաթղթեր: ԱՊՔ-ի գործունեության հիմնական հաշվետու փաստաթուղթն է՝ տարեկան հաշվետվությունը, որն արտացոլում է ԱՊՔ-ի գործունեության գրեթե բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները: Երկրորդ կարևորագույն փաստաթուղթը համախմբված ֆինանսական հաշվետվություններն են՝ ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի կատարողականը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:	
Հիմքեր	ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf ԱՊՔ շրջանավարտների և հասարակության հետ կապերի ստորաբաժանման զարգացման ծրագիր.pdf Ներքին հաշվետվություն.pdf

Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: ԱՊՔ կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված է նաև ամբիոնների մակարդակով հաշվետվողականության համակարգ: ԱՊՔ խորհրդի հերթական նիստից առաջ հրավիրվում են խորհրդի նիստեր, որտեղ ամբիոնների վարիչները ներկայացնում են իրենց գործունեության մասին հաշվետվություն: Ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները քննարկվում են մանկավարժական խորհրդում: ԱՊՔ հաշվետվողականության համակարգը գործում է ԱՊՔ կանոնադրությամբ: ԱՊՔ-ն ուսումնական տարվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով, հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, պետեկամուտների կոմիտեին, ազգային վիճակագրական ծառայությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:	
Հիմքեր	Հաշվետվություն արտաքին շահակիցներին.pdf Ներքին գնահատման հաշվետվություն.pdf www.ascol.am

Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: ԱՊՔ-ի արդյունավետ կառավարման նպատակներից է հաշվետվողականության

երաշխավորումը՝ հանրությանը տեղեկացնելով շնորհվող որակավորումների, և տրամադրվող այլ ծառայությունների որակի մասին: Քոլեջը իր գործունեության արդյունքների, տարբեր ստորաբաժանումների գործունեության ցուցանիշների հրապարակումն իրականացնում է քոլեջի պաշտոնական կայքէջում /www.ascol.am/ սոցիալական ցանցում՝ /ֆեյսբուքյան էջում/:

Քոլեջը մշտական կապ է պահպանում գործատուների հետ: 2018 թվականից սկսած քոլեջի կարիերայի կենտրոնը պարբերաբար կազմակերպում է սեմինար այցեր երիտասարդների հետ, որի ընթացքում երիտասարդներին է ներկայացվում աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությունների ցանկը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հիմքեր	ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf Տնօրենի խորհրդական.pdf

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Կայքը գործարկումից ի վեր հարստացվում է նոր խորագրերով և տեղեկատվությամբ, գրեթե ամենօրյա ռեժիմով ներկայացնում են քոլեջային անցուդարձին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ, հայտարարություններ, որով ապահովում է նշանակալի և անհրաժեշտ տեղեկատվություն: Նույն ռեժիմով սպասարկվում է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում բացված ԱՊՔ պաշտոնական էջը, որտեղ ևս ներկայացվում է քոլեջային կյանքին վերաբերող լրատվություն: ԱՊՔ պաշտոնական կայքն (www.ascol.am) ամենօրյա ռեժիմով ապահովում է լրատվություն՝ ներկայացնելով ոչ միայն քոլեջային միջոցառումները, այլև այն ամբողջ հարցերի շրջանակները, որոնք հետաքրքրում են հասարակությանը՝ կապված կրթության հոտ: Քոլեջի պաշտոնական կայքում գրեթե բոլոր հրապարակումների, այնտեղ զետեղված տարատեսակ տեղեկատվական նյութերի վերաբերյալ ստացվում են արձագանքներ, որոնք հիմք են դառնում հետագա աշխատանքի և հետադարձ կապի ապահովման համար: Ֆեյսբուքում քոլեջի պաշտոնական էջն ունի հետադարձ կապի ավելի լայն և հստակ հնարավորություն: Այդ կապի ապահովման կառուցակարգերն այստեղ ավելի ճկուն են և նկատելի: Քոլեջի գործունեության լուսաբանումն իրականացվում է նաև քոլեջային իրադարձությունների մասին լուսաբանում ապահովելով:

Կարևորվում է նաև տնօրենի խորհրդականի դերը, ով ի պաշտոնե իրավասություն ունի ներկայացնել հաստատության շահերն այլ կազմակերպություններին, պետական հիմնարկներին և ֆիզիկական անձանց /Տնօրենի խորհրդական.pdf/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հիմքեր	ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf

Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջը կարևորում է բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը, սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը: Կադրերի վերապատրաստման ու մասնագետների որակավորման բարձրացման ծրագրերի իրագործման համար ԱՊՔ-ում կարևորվում է հարատև և լրացուցիչ կրթահամակարգի ընդլայնումը: Միջազգային կազմակերպություններից ԱՊՔ-ն համագործակցում է «Վորլդ Վիժն»-ի հայաստանյան ներկայացուցչության հետ:

«Վորլդ Վիժն» կազմակերպության կողմից 2018թ. Կահավորված լսարանում պարբերաբար իրականացվում են սեմինարներ, ուսանողները և մարզի երիտասարդական ակումբների ներկայացուցիչները կազմակերպում են քննարկումներ:

Հասարակայնության հետ կապերի ձևավորման համար կարևոր է նաև այն հանգամանքը, որ պարբերաբար կազմակերպվում են այցեր քոլեջ՝ այդ տարվա դպրոցների շրջանավարտները և ծնողները, ովքեր մասնագիտական կողմնորոշման շրջանակներում տեղեկացվում են քոլեջի կրթական ծրագրերի, հնարավորությունների ու գործունեության վերաբերյալ:

Ներկայացնել քաղաքացի դաստիարակելու գործում հաստատության ունեցած դերն ու կատարած ներդրումները: Նշել հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ձգտում է տրամադրել որակյալ կրթություն, իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում: ԱՊՔ-ն այնպիսի ուսումնական հաստատություն է, որը՝

- Ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր;
- Ապահովում է ուսանողների բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը;
- Մատչելի է և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հաստատության ամենատարբեր շերտերին;
- Ուսանողներին տրամադրում է բարձրորակ կրթություն և բարենպաստ միջավայր;
- Տրամադրում է լրացուցիչ կրթություն /ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf/

Ուժեղ կողմեր	*Թույլ կողմեր*
1.Տրամադրվում է որակյալ կրթություն և ապահովում է բարենպաստ կրթական միջավայր 2.Ուսանողների ակտիվ ներհոսք 3.Դասախոսական կազմի գործունեության արդյունավետության բարձրացում՝ պարբերաբար իրականացվող վերապատրաստումների շնորհիվ 4.Մասնագիտությունների արդիականացում ամենամյա մշտադիտարկման միջոցով 5.ԱՊՔ պաշտոնական վեբ կայքի առկայություն 6.Ներքին և արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականությունը և թափանցիկությունը ապահովող մեխանիզմների առկայություն 7.ԱՊՔ գործունեության լուսաբանում /սոցիալական հարթակներ, ամսագրեր, բուկլետների տրամադրում, հայտարարությունների տարածում/ 8.Սոցիալապես անապահով ուսանողներին աջակցության մեխանիզմի առկայություն	1.ԱՊՔ լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի բացակայություն 2.Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության պակաս 3.Ամսաթերթի բացակայություն

Հնարավորություններ 1.Ուսանողներին ընձեռում է հնարավորություն ուսումը շարունակելու բարձրագույն ուսումնական հաստատություններում /հիմք՝ ԲՈՒՀ-երի հետ կնքված պայմանագրեր/ 2.Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող սեմինար խորհրդատվություններ 3.Դրամաշնորհ	***Վտանգներ*** 1.Քաղաքական փոփոխություններ 2.Որակյալ կադրերի արտագաղթ 3.Ֆինանսական մուտքերի հնարավոր նվազում՝ կապված վճարունակության և պետական ֆինանսավորման նվազման հետ
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝ ***• ԱՊՔ լրատվության և հասարակության հետ կապերի աշխատանքային թիմի կազմում*** ***• դասախոսական կազմի աշխատանքի խրախուսման մեխանիզմների հագեցում***	

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր: Արարատի պետական քոլեջը, որպես կրթական առաքելություն իրականացնող հաստատություն, կարևորում է սոցիալական գործընկերությունը՝ որպես սոցիալական համերաշխության և հասարակության ապահովման, ինչպես նաև խնդիրների լուծման արդյունավետ եղանակների որոշման հիմնական միջոց: Այս կոնտեքստում կարևորվում է • ԱՊՔ-ի հանրային կապերի հայեցակարգի վերանայումը, • Մարքեթինգային գործողությունների հայեցակարգի մշակումը և գովազդային նյութերի բազմազանեցումը, • Հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապի ընդլայնումը և մշտադիտարկման համակարգի զարգացումը, • Հանրային ծրագրերին և նախաձեռնություններին քոլեջի ներգրավման ընդլայնումը և զարգացումը, հանրությանը մատուցվող ծառայությունների բազմազանեցումը:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	
Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: 2018-2023թթ. քոլեջի զարգացման ծրագիրը նախատեսում է զարգացնել սոցիալական գործընկերությունը, սակայն միջազգային հարթակում դեռևս համագործցային և գործընկերային հարաբերություններ չկան: Կան միայն համագործակցություններ մի քանի միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների հետ («Վորլդ Վիժն», ՛՛GIZ՛՛):	
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:	
Հիմքեր	
Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Քանի որ ԱՊՔ-ի առաքելության և զարգացման հիմնական նպատակների շրջանակում դեռևս	

չի նախատեսվում միջազգայնացումը, հետևաբար այդ գործընթացը համակարգող ստորաբաժանում ևս չի գործում քոլեջում:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:	
Հիմքեր	2017-2018 , 2018-2019, 2019-2020 ուստարիների պրակտիկայի վայրերի ցանկ.pdf Կարիերայի կենտրոնի կանոնակարգ.pdf
Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Արարատի պետական քոլեջը ակտիվորեն համագործակցում է տեղական հաստատությունների և կառույցների հետ ուսումնական պրակտիկաների շրջանակներում 2017-2018 , 2018-2019, 2019-2020 ուստարիների պրակտիկայի վայրերի ցանկ.pdf: Վերջիններս իրենց ներդրումն են ունենում սովորողների պրակտիկ զարգացման, կարողությունների, ունակությունների, հմտությունների կատարելագործման մեջ: Ակտիվ գործունեություն է ծավալում նաև կարիերայի կենտրոնը «Զբաղվածության կենտրոն»-ի, գործատուների հետ՝ նպատակ ունենալով ապահովել շրջանավարտների մուտքը դեպի աշխատաշուկա: Կարիերայի պատասխանատուն պարբերաբար կազմակերպում է քոլեջի ուսանողների մասնակցությունը աշխատանքային տոնավաճառներին, սեմինարներին, թրեյնինգներին, աշխատաժողովներին, ցուցահանդեսներին, որոնց բազմազանությունը նպաստում է սովորողների այլընտրանքային մտածողության, աշխատաշուկայում ներկայանալի լինելու զարգացմանը Կարիերայի կենտրոնի կանոնակարգ.pdf: Կրթության շարունակականության հետ կապված՝ ԱՊՔ-ն համագործակցում է Հայաստանի առաջատար պետական ԲՈՒՀ-երի հետ: Այդ համագործակցությունը հնարավորություն է տալիս քոլեջի լավագույն շրջանավարտներին կրթությունը շարունակելու գործընկեր ԲՈՒՀ-երում: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ), մասնագիտական կրթության ուսուցման և զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ), «Վորլդ Վիժն-Հայաստան»-ի, ″GIZ″-ի հետ համագործակցության շրջանակներում քոլեջի ներկայացուցիչները պարբերաբար վերապատրաստման դասընթացներ են անցնում, մասնակցում վերջիններիս կողմից կազմակերպվող սեմինարներին, աշխատաժողովներին: 2019թ. Իտալիայի Թուրին քաղաքում քոլեջի տնօրենը մասնակցեց «Ռազմավարությունների կիրառում Մեծ քսանյակի (G20) խմբի կադրերի մասնագիտական վերապատրաստման համար. մասնագիտական վերապատրաստման հաստատությունների կառավարում» խորագրով վերապատրաստման դասընթացին: Յուրաքանչյուր համագործակցություն իր օրինաչափ դրական ազդեցությունն է ունենում ոչ միայն վերապատրաստվող մանկավարժների, այլ նաև քոլեջի կրթական որակի վրա: Քոլեջը համագործակցում է նաև «Անուշավան և Օֆիկ Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամի հետ, որի շրջանակներում ոչ միայն վերանորոգման աշխատանքներ են իրականացվել, այլ նաև գույքով են զինվել առանձին առարկայական կաբինետներ («Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Խոհարարական գործ», «Արմաթ» լաբորատորիա և այլն):	
ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:	
Հիմքեր	
Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:	

№	Աշխատակիցներ	2018		2019		2020	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
1	Դասավանդող	27	84	30	85	35	85
2	Վարչական աշխատող	9	93	9	92	15	100

Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:

№	Ուսանողներ	2018		2019		2020	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
1	Ֆինանսներ	13	32	15	34	18	40
2	Հաշվապահական հաշվառում	10	27	13	30	14	32
3	Սպասարկման կազմակերպում	11	28	13	31	15	33
4	Շուկայաբանություն	18	33	20	35	23	35
5	Համակարգչային գեղարվեստական նախագծում	-	-	5	45	10	40
6	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	-	-	-	-	7	35
7	Դեղագործություն	3	30	2	35	4	36
8	Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	5	35	5	34	6	36
9	Նախադպրոցական կրթություն	10	38	12	38	11	36
10	Գինեգործություն և հյութերի արտադրություն	-	-	3	42	4	43
11	Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում	7	38	5	45	2	40
12	Կարի արտադրության տեխնոլոգիա	7	47	6	45	7	48
13	Խոհարարական գործ	-	-	-	-	5	45
14	Համակարգիչների շահագործում	6	35	8	45	3	40

Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվ ըստ տարիների

№	Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը	2016	2017	2018	2019	2020
1						
2						

Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների

№	Երկրներ	2016	2017	2018	2019	2020
1						
2						

Ներկայացնել և վերլուծել վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջում օտար լեզուների ուսումնասիրումը և օտար լեզուների կիրառությունը կազմակերպում է միայն համապատասխան առարկաների/մոդուլների շրջանակներում: Հետևաբար և՛ ուսումնառողների, և՛ դասավանդողների շրջանում այն կիրառելի է միայն

համապատասխան դասի շրջանակներում:	
Ուժեղ կողմեր 1.Համագործակցություն տարբեր գործատուների հետ 2.Կարիերայի կենտրոնի ակտիվ համագործակցությունը գործատուների և այլ կազմակերպությունների հետ 3.Համագործակցություն տարբեր կառույցների հետ /«Անուշավան և Օֆիկ Աբրահամյան կրթական հիմնադրամ»/ 4.Տարբեր ԲՈՒՀ-երի, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում իրականացված վերապատրաստումներ /«Վորլդ Վիժն-Հայաստան», GIZ, ՄԿՈՒԶԱԿ, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, «Սեյվ դը չիլդրեն», «Ռազմավարությունների կիրառում Մեծ քսանյակի (G20) խմբի կադրերի մասնագիտական վերապատրաստման համար. մասնագիտական վերապատրաստման հաստատությունների կառավարում» խորագրով վերապատրաստում Իտալիայի Թուրին քաղաքում և այլն/	***Թույլ կողմեր*** 1.Միջազային կապերի բացակայություն
Հնարավորություններ 1.Համագործակցության շրջանակների ընդլայնում, ՀՀ տարբեր ԲՈՒՀ-երի, գործատուների հետ	***Վտանգներ*** 1.Այլ ուսումնական հաստատություններում ևս ֆինանսական միջոցների պակաս՝ համագործակցության համար 2.Արտաքին գործոնների փոփոխություններ
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝ • ***միջազգային դրամաշնորհային ծրագրերին շարունակական մասնակցություն,*** • ***համագործակցության շրջանակների ընդլայնում և՝ աշխարհագրական առումով, և՝ բազմազանությամբ,*** ***դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի օտար լեզուների իմացության բարելավմանն ուղղված աշխատանքներ:***	

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:*

Չափորոշիչ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր:	
Հիմքեր	ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf Որակի հայեցակարգ.pdf Կրթության ներքին որակի կանոնակարգ.pdf Ներքին և արտաքին գնահատման չափանիշների և իրականացման կարգ.pdf

Արարատի պետական քոլեջում կրթության ներքին որակի ապահովման քաղաքականության հիմքերը դրվել են դեռևս 2015 թվականից, երբ ստեղծվեց կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածը և սկսեց հանդես գալ որպես առանձին ստորաբաժանում: Դրանով քայլ արվեց քոլեջում որակի ապահովման ներքին համակարգի ձևավորման, ներդրման և գործարկման ուղղությամբ: Որպես առաջին քայլ՝ որդեգրվեց որակի ապահովման ներքին համակարգի ձևավորման քաղաքականություն, որը պետք է ուղիղ կապ ունենար քոլեջի առաքելության և ռազմավարության հետ:

Համաձայն քոլեջի զարգացման ծրագրի՝ ԱՊՔ-ն ձգտում է տրամադրել որակյալ կրթություն, իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում: Ուստի կարևորվում է որակի ապահովմանն ուղղված միջոցառումների կառավարումը՝ որակյալ կրթական միջավայրի ստեղծումը (գույք, ժամանակակից սարքավորումներ, շենքային պայմաններ, մասնագիտական կաբինետներ, գրադարան, դահլիճներ), ապահովումը համապատասխան դասախոսական կազմով, հիմնարար տեսական և կիրառական գիտելիքների և կարողությունների բազայով, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մոտեցումների համապատասխան բազայով, որը ներառում է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, արդյունավետ հաղորդակցման և թիմային աշխատանքների կարողությունների ձևավորում, գիտելիքի ճկունություն և այն փոխակերպելու կարողություն, ուսանողների կարիքների գնահատումը և վերհանումը, օժանդակություն ցուցաբերելու պատրաստակամությունը, ուղղորդելու և խորհրդատվության մատչելիությունը, հարգանքին և փոխըմբռնմանը նպաստող միջավայրի ապահովումը, տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտությունների լիցենզավորումը, մասնագիտական կրթական ծրագրերի մատուցման արդյունավետության ապահովումը, ուսանողների հետադարձ կապի ապահովումը, ուսանողների ուսումնառության նպաստումը, խնդիրների լուծման և բողոքների կարգավորման ապահովումը:

2017-2018 ուսումնական տարում մշակվել է քոլեջի կրթության ներքին որակի

ապահովման ենթակառուցվածքի հայեցակարգը: Այն իր մեջ ներառում է որակի ապահովման համակարգի նպատակային կառավարման տեսլականը, մանրամասն հաղորդում է որակի ապահովմնան շրջանակում քոլեջի անելիքները, նպատակները, խնդիրները, սկզբունքները, կիրարկման միջոցները, իրականացման ռազմավարությունը, չափանիշները, իրականացման մեխանիզմներն ու առաջնահերթ ոլորտները, դրանց ընթացակարգերն ու գնահատման գործիքները, որակի ապահովման հասկացությունները և որակի ապահովման հայեցակարգի և որակի ապահովման համակարգի քարտեզները:

2017-2018 ուսումնական տարում մշակվել և 2018թ. հունվարի 24-ի կառավարման խորհրդի №3 նիստի որոշմամբ հաստատվել է ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի կանոնակարգը: Վերջինս իր մեջ արտացոլում է որակի ներքին ապահովման հիմնական դրույթները, խնդիրները, գործառույթները, ընթացակարգերը և քաղաքականությունը: Կանոնակարգում մասնավորապես սահմանված են որակի ներքոլեջային ապահովման քաղաքականության խնդիրները, գործառույթները, որակի հանձնաժողովի կառուցվածքը, կառավարման և գործունեության կազմակերպման ընթացակարգը, հանձնաժողովի անդամների գործառույթները և իրավասությունները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր	Որակի հայեցակարգ-converted.pdf ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԻ ԿԱՆԱՆԱԿԱՐԳ.pdf Հանձնաժողովներ կազմելու մասին հրաման.pdf Ֆինանսներ.pdf Հրաման.pdf Նյութական ռեսուրսների բաշխում.pdf ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ»ՊՈԱԿ-ի 2018-2023 թթ զարգացման ծրագիր.pdf

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ձևավորվում է կրթության ներքին որակի ապահովման հանձնաժողով, որը հաստատվում է տնօրենի կողմից Որակի հանձաժողով.pdf: Հանձնաժողովը գործում է ԱՊՔ տնօրենի անմիջական ենթակայությամբ, այն ղեկավարում է պատասխանատուն, ով կազմակերպում է հանձնաժողովի ընթացիկ աշխատանքները և պատասխանատվություն է կրում հանձնաժողովի աշխատանքների որակի և հանձնաժողովի խնդիրների և գործառույթների իրականացման համար /հավելված՝ Կրթության ներքին որակի կանոնակարգ.pdf/:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝ ՈԱ գործընթացների կազմակերպումը, իրականացումն ու վերահսկողությունը: Այն իրագործելիս որակի հանձնաժողովը համագործակցում է ԱՊՔ այլ ստորաբաժանումների հետ, ԱՊՔ ներքին որակի ապահովման ոլորտին առնչվող չափորոշիչների, գործընթացների, ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ երաշխավորությունների և առաջարկների ներկայացում և այլն: Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝ ուսումնական ծրագրերի որակի ուսումնասիրում և ապահովում, ուսանողների ուսումնառության

գնահատում և որակի ապահովում, դասախոսական կազմի որակի ապահովում:

Հանձնաժողովը իրավասություն ունի անցկացնելու հարցումներ՝ սահմանված կարգով, ձեռք բերելու անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվական նյութեր ԱՊՔ ստորաբաժանումներից՝ հանձնաժողովի աշխատանքներն իրականացնելու համար, անհրաժեշտության դեպքում ներգրավելու ԱՊՔ-ի համապատասխան աշխատակիցների: Մասնավորապես՝ քոլեջում 2020թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար կազմվել է հանձնաժողով, որի կազմի մեջ ներառվել են դասախոսական կազմի ներկայացուցիչներ, ովքեր ուսումնական տարվա սկզբում կազմված որակի հանձնաժողովի կազմում ներառված չեն եղել: Այս գործընթացը քայլ առաջ էր կրթության ներքին որակի հանձնաժողովում թիմային աշխատանքի մշակույթի ձևավորման ճանապարհին /հավելված՝ Հրաման.pdf/:

Որակի հանձնաժողովից զատ՝ քոլեջի դասախոսական կազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ իր գործունեությամբ նպաստում է կրթության ներքին որակի ապահովմանը: Կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի նիստերին մասնակից են քոլեջի բոլոր դասախոսները, վարչական կազմի ներկայացուցիչները:

Քոլեջում առկա են յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսված առարկայական կաբինետներ, որոնք հագեցած են անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: Բոլոր առարկայական կաբինետները կրում են բովանդակային և նպատակային օգտագործման բնույթ, ինչպես նաև համապատասխանում ժամանակի պահանջներին /հավելված՝ Նյութական ռեսուրսների բաշխում.pdf/: Ուսումնական տարվա ընթացքում դասերն անցկացվում են համապատասխան կաբինետներում՝ ապահովելով դասապրոցեսի արդյունավետությունը: Գործող առարկայական կաբինետներն են՝ «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Խոհարարական գործ», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Գինեգործություն և հյութերի արտադրություն» արհեստագործական բաժինների, «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության, «Ինֆորմատիկայի», «Կերպարվեստի ուսուցման մեթոդիկայի», «Հայոց լեզվի և գրականության», «Անատոմիայի, ֆիզիոլոգիայի և էկոլոգիայի», «Կառավարման և ֆինանսների», «Նախնական զինվորական պատրաստության», «Մաթեմատիկայի», «Ֆիզիկայի», «Աշխատանքի ուսուցման», «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների», «Պատմության, իրավունքի և հասարակագիտական առարկաների», «Ռուսաց լեզվի», «Քիմիայի և դեղագործության», «Էկոնոմիկայի և մարքեթինգի», «Հաշվապահական հաշվառման», «Համակարգիչների շահագործման», «Անգլերեն լեզվի ուսուցման»: Գործում են նաև մարզադահլիճ, գրադարան և միջոցառումների անցկացման դահլիճ:

ԱՊՔ հիմնարար արժեքներ են հանդիսանում դասախոսական կազմի ներուժի, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացումը, աշխատակիցների բարեկեցության մակարդակի բարձրացումը, ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանների զարգացումը /հավելված՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ»ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf/:

ԱՊՔ ֆինանսների տնօրինման քաղաքականության հիմնական սկզբունք է՝ ֆինանսները տնօրինել և կառավարել՝ ելնելով քոլեջի ռազմավարությունից: Ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է տարբեր ուղղություններով, այդ թվում նաև՝ ուսումնական

գործընթացի, կրթական ծառայությունների, նյութատեխնիկական բազայի համալրման /հավելված՝ Ֆինանսներ.pdf/:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:	
Հիմքեր	Կրթության ներքին որակի կանոնակարգ.pdf Որակի հայեցակարգ.pdf Դասալսումներ.pdf/ Պատմություն առարկայի դրվածքը.pdf Հարցաթերթիկի օրինակ.pdf 2017-2018, 2018-2019, 2019-2020 ուստարիների պրակտիկայի վայրերի ցանկ.pdf, Պրակտիկաների կազմակերպման պայմանագրեր.pdf Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի աշխատանքի կազմակերպման կանոնակարգ.pdf

Քոլեջի որակի ապահովման գործընթացներում ներգրավված են ներքին (ուսանողներ, դասախոսներ, վարչական կազմ) և արտաքին (գործատուներ, պետական կառավարման համակարգի մարմիններ, կազմակերպություններ, ծնողներ) շահակիցները:

Քոլեջում ողջ ուսումնական տարվա ընթացքում ինտենսիվ կերպով անցկացվում են փոխադարձ դասալսումներ առարկայական ամբիոնների բոլոր դասախոսների, բոլոր ստորաբաժանումների պատասխանատուների, ուսումնական մասի վարիչների կողմից /հավելված՝ դասալսումներ.pdf/: Փոխադարձ դասալսումները միաժամանակ և՛ դասվանդող դասախոսի կողմից կիրառվող մեթոդների, ունեցած մանկավարժական փորձի փոխանակման գործառույթ է կատարում, և՛ ուսումնասիրվում է դասընթացի և հատկապես տվյալ դասի արդյունավետությունը: Արդյունքները գրավոր կարգով ամփոփվում են դասալսումների գրքերում (առարկայական ամբիոնների, մեթոդական խորհրդի, կրթության ներքին որակի ենթակառուցվածքի), բանավոր կարգով ևս քննարկումներ են ընթանում, ընդգծվում են առավելությունները, բացթողումների շտկման տարբերակներ են առաջարկվում: Այս ամենն իր արդյունավետությունն է ունենում դասապրոցեսի կազմակերպման շրջանակում: Անցկացվում են բաց դասեր, բաց դաս-միջոցառումներ, որոնց անմիջական մասնակից են լինում ուսանողները: Վերջիններս ունենում են ուսուցանող ազդեցություն և՛ կրթական, և՛ հոգևոր-մշակութային, և՛ դաստիարակչական առումով: Առարկայական ամբիոններում յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում անցկացվում են առարկաների դրվածքների ուսումնասիրումներ, որոնք միտում ունեն ուսումնասիրելու կոնկրետ առարկայի անցկացման արդյունավետությունը կոնկրետ դասախոսի կողմից /հավելված՝ Պատմություն առարկայի դրվածքը.pdf/: Վերջինիս վերլուծությունները ևս գրանցվում են դասալսումների գրքերում:

Սկսած 2018-2019 ուսումնական տարուց՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ որակի ստորաբաժանման կողմից ուսանողների շրջանում անցկացվում են ուսուցման որակի գնահատման անանուն հարցումներ /հավելված՝ Հարցաթերթիկի օրինակ.pdf/: 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է ընդլայնել հարցումների շրջանակը, ինչպես նաև առկա հարցաթերթիկում որոշ փոփոխություններ կատարել:

2020թ. հունվարին քոլեջի հաստիքակազմում կատարված փոփոխությունների արդյունքում հաստիքների ցանկն ընդլայնվեց, ինչն էլ հնարավորություն տվեց աշխատանքի առավել հստակեցված բաժանում կատարել և բարձրացնել կատարվելիք աշխատանքի արդյունավետությունը:

Քոլեջը տարբեր ծրագրերի շրջանակներում համագործակցում է միջազգային

կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ (Վորլդ վիժն, GIZ): Համագործակցության շրջանակներում անցկացվում են վերապատրաստումներ, կազմակերպվում են հանդիպումներ արտաքին շահակիցների՝ գործատուների, պետական կառավարման համակարգի մարմինների, մասնավոր կազմակերպությունների հետ:

Պրակտիկաների անցկացման տեսքով համագործակցությունների շրջանակը մասնավոր կազմակերպությունների և պետական կառավարման համակարգի մարմինների հետ ևս լայն է /հավելված՝ 2017-2018, 2018-2019, 2019-2020 ուստարիների պրակտիկայի վայրերի ցանկ.pdf, Պրակտիկաների կազմակերպման պայմանագրեր.pdf/:

Ուսանողների ծնողները, որպես արտաքին շահակիցներ, ևս իրենց դերն ունեն կրթության որակի ապահովման գործընթացում: Վերջինս իրականացվում է ոչ միայն ծնողների հետ կուրսղեկների մշտական կապի մեջ լինելու, այլ նաև պարբերաբար հրավիրվող ծնողական ժողովների, ծնողների հետ հանդիպումների միջոցով /հավելված՝ Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի աշխատանքի կազմակերպման կանոնակարգ.pdf/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր	Որակի հայեցակարգ.pdf Հարցաթերթիկի օրինակ.pdf 2019-2020 ուստարվա որակի ապահովման ենթակառուցվածքի հաշվետվություն.pdf

Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջում որակի ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է, սակայն այն դեռևս իր սաղմերն ամրապնդելու խնդիր ունի: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ կրթության ներքին որակի ենթակառուցվածքը (ստորաբաժանումը) ձևավորվել է դեռևս 2015 թվականից, սակայն այն գործել է այլ հաստքի (պրակտիկայի բաժնի վարիչ) համատեղությամբ, ոչ թե որպես առանձին հաստիք: Հետևաբար, որքան էլ որ որակի ապահովման ստորաբաժանման պատասխանատուն ջանասեր լիներ, հաստիքային աշխատանքի հետ միաժամանակ, ֆիզիկապես չէր կարող գերազանց կատարել նաև որակի ապահովման աշխատանքները: Այնուամենայնիվ, պարբերաբար վերանայման և թարմացման գործընթացը եղել է հարցումների տեսքով, դասալսումների վերլուծությունների, տարեկան վերլուծությունների, հաշվետվությունների տեսքով:

ՀՀ ԿԳՄՍՆ կողմից հաստատված 2020թ. հունվարի հաստիքացուցակի համաձայն՝ նույն այդ ժամանակահատվածից սկսած կրթության որակի ապահովման պատասխանատուի հաստիք է գործել ԱՊՔ-ում: Իսկ 2020-2021 ուսումնական տարում արդեն որակի պատասխանատուն այլ հաստիքի համատեղությամբ չի կազմակերպում իր աշխատանքները: Վերջինս հնարավորություն կտա ոչ միայն առավել հստակ կատարել հանձնաժողովի աշխատանքի բաժանումը և նպաստել թիմային աշխատանքին, այլ նաև քոլեջում որակի մշակույթի ներդրման գործընթացն ավելի ինտենսիվ դարձնել: Այս գործընթացում առավելություն է հանդիսանում որակի կառավարման համակարգի երկարամյա գործունեությունը, արդեն իսկ մշակված հայեցակարգը, ընթացակարգը, գնահատման համակարգը, վերջինիս վերլուծությունը, քոլեջի զարգացման ծրագրին համահունչ գործելը, կազմակերպվող և անցկացվող նիստերը, քննարկումները, հետևողականությունը քննաշրջանին, համագործակցությունը բոլոր ստորաբաժանումների հետ: Բոլոր այս նախադրյալներն առաջիկայում աշխատանքի արդյունավետության հիմք են հանդիսանում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր	Ներքին և արտաքին գնահատման կարգ.pdf Որակի հայեցակարգ.pdf

Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջում գործում է ներքին և արտաքին գնահատման կարգ /հավելված՝ ներքին և արտաքին գնահատման կարգ.pdf/: Արտաքին գնահատման շրջանակներում ուսումնասիրվում են գործընկերների կարծիքները, առաջարկությունները, որոնք կարող են դրական անդրադարձ ունենալ կրթության որակի ապահովման գործում: Մասնավորապես, բանկային ոլորտի գործընկերների կողմից եղել են առաջարկություններ՝ քոլեջի ուսումնական պլանում ընդգրկել առարկաներ, որոնք կօգնեն ուսանողին տիրապետելու բանկային գաղտնիքների, բանկային համակարգում առկա մի շարք նրբությունների: Կամ արտադրական ձեռնարկություններում արտադրական տեխնոլոգիաների հետ կապված աշխատանքային պահանջներից ելնելով տեսական դրույթների ներմուծում, ապա համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորում:

Ուսումնասիրություններ են կատարվում նաև շրջանավարտների շրջանում, թե ո՞ր մասն է աշխատանքի ընդունվել և ո՞ր մասն է աշխատում իր մասնագիտությանը համապատասխան ոլորտում, քանի որ Արարատի պետական քոլեջը, որպես միջին մասնագիտական կրթական հաստատություն, ունի առաքելություն՝ շրջանավարտներին դեպի աշխատաշուկա ուղղորդելու: Վերջինիս ուղղությամբ ակտիվ քայլեր է ձեռնարկում նաև քոլեջը՝ թափուր աշխատատեղերը լավագույն շրջանավարտներով լրացնելու տեսքով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր	ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf Հարցման արդյունքներ.pdf Ներքին և արտաքին գնահատման կարգ.pdf

Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համաձայն ՀՀ օրենսդրության սահմանված կարգի և պահանջների՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին տնօրենի հրամանով կազմվում է ներքին գնահատման հանձնաժողով՝ աշխատանքները կատարելու համար /հավելված՝ Ներքին և արտաքին գնահատման կարգ.pdf/: Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և հսկողության իրականացման գործընթաց: Ներքին գնահատման նպատակն է հանդիսանում բարելավել միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծառայությունների մատուցման որակը, ինչպես նաև նպաստել գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, դասախոսների աշխատանքի արդյունավետության և ուսանողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով: ԱՊՔ-ի ներքին գնահատումն իրականացված է հետևյալ ոլորտներում.

- հաստատության անվտանգության,
- հաստատության գործունեության արդյունավետության և ուսումնական գործընթացի որակի,
- համայնքային մասնակցության:

Վիճակագրական տվյալների, փաստաթղթային վերլուծության, դիտարկման և փաստագրման հարցումների իրականացման և արդյունքների վերլուծության մեթոդներով իրականացվում է ներքին գնահատում: Այն ամփոփվում է մշակված կարգին համապատասխան մշակված հաշվետվությամբ /ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf/:

Հաշվետվության թափանցիկությունն ապահովվում է քոլեջի պաշտոնական կայքում հաշվետվության հրապարակմամբ:

Ուժեղ կողմեր Որակի կառավարման հնամակարգի երկարամյա գործունեություն Կրթության որակի ներքին ապահովման համակարգի ընթացակարգի և ռազմավարության առկայություն Որակի կառավարման համակարգի թափանցիկություն Քոլեջի ռազմավարական ծրագրում որակի ապահովմանն ուղղված նպատակների, խնդիրների առկայություն Քոլեջում որակի ապահովման մշակույթի ձևավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլեր Կրթության որակի ապահովման և բարձրացման ուղղությամբ քոլեջի տնօրինության նպատակային աշխատանք, մշտական հետևողականություն Կրթության որակի ուսումնասիրման նպատակով գնահատման համակարգի առկայություն	***Թույլ կողմեր*** 1. Ոչ թիմային աշխատանք
Հնարավորություններ 1. Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համագործակցություն /վերապատրաստումներ, սեմինարներ, հանդիպումներ և այլն/	***Վտանգներ*** 1. ՀՀ-ում գործող այլ միջին մասնագիտական կրթական հաստատությունների հետ համագործակցության պակաս
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները՝ • ***դասախոսական կազմի ներկայացուցիչների ընդգրկում ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող սեմինար-հանդիպումներին,*** • ***այլ քոլեջների հետ համագործակցության շրջանակների մեծացում:***	

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. 2017-2018 , 2018-2019, 2019-2020 ուստարիների պրակտիկայի վայրերի ցանկ.pdf
2. 2019-2020 ուսումնական տարվա որակի ապահովման ենթակառուցվածքի հաշվետվություն.pdf
3. 2019-2020 ուսումնական տարում ԱՊՔ տնօրենի կատարած աշխատանքների հաշվետվություն.pdf
4. Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականություն.pdf
5. Անշարժ գույքի վկայական.pdf
6. Աշխատանքի ընդունման և հեռացման կանոնակարգ.pdf
7. ԱՊՔ-ի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլան.pdf
8. ԱՊՔ –ի աշխատանքային խորհուրդներ և հանձնաժողովներ.pdf
9. ԱՊՔ-ի կանոնադրություն.pdf
10. ԱՊՔ լեզուների հանձնաժողովի զարգացման պլան.pdf
11. ԱՊՔ շրջանավարտների և հասարակության հետ կապերի ստորաբաժանման զարգացման ծրագիր.pdf
12. ԱՊՔ վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2020-2025թթ. զարգացման ծրագիր.pdf
13. ԱՊՔ տնտեսագիտական հանձնաժողովի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf
14. ԱՊՔ տնօրենի, բաժնի վարիչների, մանկավարժների, ուսանողների իրավունքներն ու պարտականությունները.pdf
15. ԱՊՔ-ում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգ.pdf
16. ԱՊՔ-ում ուսանողների գիտելիքների, կարողությունների ընթացիկ գնահատման, գնահատման արդյունքների բողոքարկման, մատենավարման և հաճախումների ընթացակարգ.pdf
17. ԱՊՔ ուսումնական մասի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf
18. ԱՊՔ ՔՊ շտաբի զարգացման ծրագիր.pdf
19. Արխիվի կանոնակարգ.pdf
20. Աուդիտ 2019.pdf
21. Բիզնես ծրագիր.pdf
22. Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն 2017-2018.pdf
23. Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն 2018-2019.pdf
24. Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն 2019-2020.pdf
25. Դասալսումներ.pdf
26. Դասախոսական կազմի դինամիկան.xlsx
27. Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կանոնակարգ.pdf
28. Դիմումների, առաջարկությունների, կարծիքների արտահայտման մատյան.pdf
29. Եկամուտներ ըստ եռամսյակի աճողականության 2018.pdf
30. Ընդունելության կանոնակարգ ԱՊՔ.pdf
31. Լեզուների ամբիոնի ընթացակարգ.pdf
32. Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի աշխատանքի կազմակերպման կանոնակարգ.pdf
33. Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկեր.pdf
34. Կարիերայի կենտրոնի պատասխանատուի գործունեության կանոնակարգ.pdf
35. Կառավարման խորհրդի կանոնակարգ.pdf
36. Կառավարման խորհրդի կազմ.pdf
37. Կրթության ներքին որակի կանոնակարգ.pdf
38. «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրի մասնագիր.pdf
39. «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ՊԿՉ.pdf

40. Հաշվետվություն արտաքին շահակիցներին.pdf
41. Հարցաթերթիկի օրինակ.pdf
42. Հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի ռազմավարությունը.pdf
43. Հետազոտությունների կազմակերպման և համակարգման կառուցվածքային սխեման.pdf
44. Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմն՝ ըստ որակավորումների 2019-2020.xlsx
45. Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմն՝ ըստ որակավորումների 2020-2021.xlsx
46. ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն.pdf
47. ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ տնօրենի, փոխտնօրենների, ամբիոնների վարիչների, մանկավարժների, բաժանմունքի վարիչների և ուսանողների իրավունքներն ու պարտականությունները.pdf
48. ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2019-2020թթ. զարգացման ծրագիր.pdf
49. ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2013-2018 թթ. զարգացման և բարեփոխման հայեցակարգ.pdf
50. ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2018-2023թթ. զարգացման ծրագիր.pdf
51. Հոգեբանի աշխատակարգ.pdf
52. Մանկավարժական աշխատողների իրավասությունների և գործունեության կանոնակարգ.pdf
53. Մանկավարժական խորհրդի կանոնակարգ.pdf
54. Մարքեթինգային հետազոտությունների իրականացում մոդուլի ծրագիր.pdf
55. Միջին մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի ընթացակարգ.pdf
56. Միջին մասնագիտական և նախանական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիաներ.pdf
57. Նախաավարտական պրակտիկայի հաշվետվություն.pdf
58. Նախնական մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի զարգացման ծրագիր.pdf
59. Նախնական մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի ընթացակարգ.pdf
60. Ներքին հաշվետվություն.pdf
61. Ներքին և արտաքին գնահատման չափանիշների և իրականացման կարգ.pdf
62. Նյութական ռեսուրսների բաշխում.pdf
63. Որակի հայեցակարգ.pdf
64. Պաշտոնի նկարագրություն բուժքրոջ.pdf
65. Պատմություն առարկայի դրվածքը.pdf
66. Պետական ատեստավորող հանձնաժողովների կարծիքները վերջին 3 տարիների համար.pdf
67. Պրակտիկաների կազմակերպման պայմանագրեր.pdf
68. «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության կրթական ծրագրի մասնագիր.pdf
69. «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության ՊԿՉ.pdf
70. Տնտեսագիտական ամբիոնի ընթացակարգ.pdf
71. Տնօրենի խորհրդական.pdf
72. Տնօրենի օգնականի կանոնակարգ.pdf
73. Տնօրինական խորհրդի կանոնակարգ.pdf
74. Ուսանողական խորհրդի կանոնադրություն.pdf
75. Ուսանողի հետազոտական գործունեության բավարարվածության վերլուծություն.pdf
76. Ուսանողների օգնության հատկացման կարգ.pdf
77. Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի գործունեության կանոնակարգ.pdf
78. Քոլեջի տնօրենի և մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման, պաշտոնից ազատման մեխանիզմների կանոնակարգ.pdf
79. ՔՊ շտաբի հանձնաժողովի և խմբերի ցուցակ.pdf
80. ՔՊ շտաբի պետի պաշտոնի նկարագրություն.pdf
81. Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվ 2019.pdf
82. Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվ 2020.pdf

83. Ֆինանսների տնօրինման ընթացակարգ.pdf
84. «Ֆինանսներ» մասնագիտության կրթական ծրագրի մասնագիր.pdf
85. «Ֆինանսներ» մասնագիտության ՊԿՀ.pdf
86. collegeararat@mail.ru
87. dimord.emis.am
88. https://ascol.am/
89. https://www.facebook.com/www.apq.am